

20Բ. ՄՈՒՍԱՌԻ. «ԱՇԽԱՐՀ ԻՐԱՆԸ ԱՅՆ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՏԵՍԵՆ, ԵՒ ԾՈՎԱՅԻՆ ՊԱՇԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԽՕՍՈՂԸ ԴԵՏԸ Ե ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԵՐՏԵ»

Իրանեան բանակի սպայակոյտի պետ գոր. Ապտեյնահիմ Շմէյթի յայտնեց, որ իր երկիրը լիովին պատրաստ է դիմակայման եւ վրիժառական ապստակով հակադարձելու: Ան նշեց, որ աշխարհը Իրանը այլ դէմքով պիտի տեսնէ, եւ ծովային պաշարումի մասին խօսողը պետք է աշխարհագրութիւնը սերտէ: Մուսաուի անցնուց, թէ որեւէ ամերիկացի ապահով պիտի չըլլայ, եւ շրջանի բոցերը Միացեալ Նահանգներն ու անոր դաշնակիցները ներքին մակարդակի վրայ պիտի այրեն

ԱԿՆԱՐԿ

ՈՒՐՈՒԱԳԻԾԵՐ ԴԷՊԻ ՆՈՐ ՇՐՋԱՓՈՒԼ

Միացեալ Նահանգներ-Իրան լարուածութեան համապատկերին վրայ փոխապառնալիքներն ու հռետորաբանութիւնը կը խօսին պատերազմի նախաշեմին գտնուելու մասին: Ամերիկեան ռազմանաւեր կը մօտենային Իրանի մերձակայ ջուրեր, մինչ Թեհրանի ներկայացուցիչները կը խոստանային ամբողջ տարածաշրջանը բռնկեցնել, եթէ Ուաշինթըն սկսէր հարուածել Իրանը:

Յայտարարողական մակարդակի այս ընդհանուր մթնոլորտին մէջ սակայն, մերթ ընդ մերթ բանակցութիւններու վերսկսման ակնարկներ կ'ըլլային երկու կողմէն: Իրանի պարագային կար երկու ուղղութիւն: Զանրապետութեան նախագահին անձամբ եւ անոր շրջանակին կը պատկանէր համեմատաբար մեղմ յայտարարութիւններ կատարելն ու բանակցութիւններու վերագործարկման ակնարկներ ընելը, մինչ հոգեւոր պետին շրջանակի խօսոյթը աւելի սպառնական եր:

Կար անշուշտ քաղաքագիտական տեսութիւնը, որ բանակցութիւններու նախօրեակին կողմերը կը բարձրացնեն սպառնալիքներու առատաւոյ՝ ամուր դիրքերէ ներկայանալու համար բանակցութիւններուն:

Միացեալ Նահանգներու նախագահը քաւի մը առիթով կը խօսէր Թեհրանի ներկայացուցիչներու կողմէ իրենց յղուած դիմումներուն մասին՝ բանակցելու առաջարկով: Սպառնալիքները կը շարունակուէին սակայն: Շարունակական բնոյթ ունէին նաեւ գետնի վրայ պատերազմի նախապատրաստութիւն յիշեցնող քայլեր եւ անոնց մասին լրատուութիւններ: Ուաշինթըն տարածաշրջան կ'ուղարկէր «Ապրահամ Լինքըն» օդանաւակիր ռազմանաւը, իսկ Իրանը կը սկսէր ռազմածովային ռազմափորձեր Զորմուզի նեղուցին մէջ: Նեղուցի ամենէն նեղ հատուածին մէջ (Իրանի եւ Օմանի միջեւ) լայնութիւնը կը կազմէ մօտ 33 քմ: Այդ հատուածով կ'անցնի աշխարհի քարիւղի առեւտուրին մօտաւորապէս մէկ հինգերորդը: Ռազմափորձին ուղերձը նեղուցի փակումին սպառնալիքը ներառած եր:

Իրանեան լրատու գործակալութիւններ հաղորդեցին, որ Իրանի Իսլամական Զանրապետութեան նախագահը հրամայած է սկսիլ հիւլեական թղթածորարին շուրջ Միացեալ Նահանգներու հետ բանակցութիւններու: Պարզ էր, որ այս որոշումը ոչ թէ համաձայնեցուած էր հոգեւոր իշխանութեան հետ, այլ անոր մղումով էր, որ կը յայտարարուէր:

Յատկանշական է, որ իրանեան աղբիւրները յայտնած էին, որ բանակցութիւնները բացառապէս պիտի վերաբերէին հիւլեական խնդիրին:

Իրանի արտաքին գործոց նախարարը բանակցութիւններու վերսկսումին նախօրեակին կը յայտարարէր, որ խորհրդակցութիւններ կ'ունենայ Սեւտական Արաբիոյ, Թուրքիոյ եւ Եգիպտոսի հետ: Այս երեքն պետք է առանձնացնել Թուրքիան երկու հանգամանք նկատի ունենալով: Նախ այն, որ Իրանի կառավարական աղբիւրներ հրապարակած էին, որ բանակցութիւնները շուտով կը սկսին, եւ նշած էին վայրը՝ Թուրքիա:

Երկրորդ. անցեալ շաբաթ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը յայտնելէ ետք իր պատրաստակամութիւնը միջնորդելու Միացեալ Նահանգներ-Իրան հարցի լուծման համար, ներկայացուցած էր առաջարկ բանակցային գործընթացը փուլային ձեւաչափի սկզբունքով գործարկելու: Մանրամասնելով, որ այս փուլին կեդրոնական միայն հիւլեական թղթածորարին վրայ. լուծել զայն եւ ապա անցնիլ յաջորդ փուլին եւ օրակարգին:

Եթէ այս հանգամանքները նկատի ունենանք, կարելի է արձանագրել, որ բանակցութիւնները պիտի վերագործարկուին Անգարայի միջնորդութեամբ: Կանխահաս է եզրակացնելը անոնց արդիւնատրման մասին: Կը թուի սակայն, որ նոր շրջափուլ կը թեւակոխէ Միացեալ Նահանգներ-Իրան յարաբերութիւնները: Իսկ շրջափուլը կը ներառէ նաեւ տարածաշրջանը մինչեւ Սուրիա, Կազա եւ Լիբանան, որոնց ուղղութեամբ յայտնապէս յաւակնուտ ծրագիրներ ունի միջնորդ պետութիւնը:

«Ա.»

ՄՕՏ ՕՐԵՆ ՈՒԱՇԻՆԿԱԹԸՆ-ԹԵՀՐԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Իրանեան «Թասնիմ» լրատու գործակալութիւնը հաղորդեց. «Զաւանական է, որ քանի մը օրէն Ուաշինթընի եւ Թեհրանի միջեւ բանակցութիւններու մեկնարկ կատարուի»:

«Բանակցութիւնները հաւանաբար պիտի կայանան արտաքին գործոց նախարար Ապպաս Արադչիի եւ ամերիկացի պատուիրակ Սթիւ Ուիթթընի միջեւ, եւ տակաւին ժողովին վայրն ու ժամանակը չեն ճշդուած», նշեց լրատու գործակալութիւնը:

Իրանի կառավարութենէ լաւատեղեակ աղբիւր մը իրանեան «Ֆարս» լրատու գործակալութեան յայտնեց. «Իրանի նախագահ Մեհուտ Փեզեշքիան հրամայեց Միացեալ Նահանգներու հետ բանակցութիւնները սկսելու»:

«Միացեալ Նահանգներու հետ բանակցութիւնները հաւանաբար քանի



մը օր ետք գումարուին Թուրքիոյ մէջ», նշեց աղբիւրը:

Միւս կողմէ, իսրայէլեան պատկերասփիւռի 13-րդ կայանը երկու աղբիւրներ վկայակոչելով հաղորդեց, թէ ամերիկացի պատուիրակ Սթիւ Ուիթթըն քիջ այսօր կը հասնի Թեյ Ալի՝ Իրանի հետ լարուածութեան խորապատկերին վրայ Իսրայէլի վարչապետ Պեհիամին Նեթանիախուի եւ այլ պաշտօնատարներու հետ հանդիպում ունենալու համար:

ԹՐԱՄՓ. «ԿԸ ՅՈՒՍԱՆԸ ԻՐԱՆԻ ԶԵՏ ԳՈՐԾԱՐԵՒ ԶԱՍՆԻԼ»

Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ յոյս յայտնեց Իրանի հետ գործարքի կնքման հասնիլ:

Նախքան այդ, Իրանի գերագոյն հոգեւոր պետ այաթոլա Ալի Խամենէին զգուշացուց, թէ Իրանի իսլամական հանրապետութեան վրայ որեւէ յարձակում շրջանային պատերազմի պիտի յանգեցնէ:

Թրամփ պատասխանելով Խամենէիի զգուշացումին վերաբերեալ լրագրողներու հարցումին յայտնեց. «Անշուշտ այդպէս պիտի ըսէ»:



«Կը յուսանք համաձայնութեան հասնիլ: Եթէ համաձայնութիւն չգոյացընենք, այդ ատեն պիտի տեսնենք, թէ իրաւունք ունի՞ր, թե՛ ոչ», նշեց ան:

Շար.ը՝ էջ 8

ՍՊԱՆԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԶԵՏ ԶԱՆԴԴՊԻՄԻ ԸՆԹԱՅԵՆ

ՆԱԽԱԳԱՅ ԱՌԻՆ. «ԿԸ ՅՈՒՍԱՆԸ, ՈՐ ՍՊԱՆԻԱՆ ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԶԵՏ ԱՇԽԱՍԱՆԸ ՏԱՆԻ՝ ԻՍՐԱՅԷԼԻ ՎՐԱՅ ՃՆՇՈՒՄ ԲԱՆԵՑՆԵԼՈՒ»

Զանրապետութեան նախագահ Ժոզեֆ Աուր Սպանիոյ վարչապետ Փետրո Սանչէզի հետ իր ընդլայնուած հանդիպումի ընթացքին բարձր գնահատեց միջազգային ու եւրոպական բոլոր հարթակներուն վրայ Լիբանանի աջակցող Սպանիոյ դիրքորոշումը, մասնաւորաբար ֆինանսական եւ այլ օժանդակութիւններու տրամադրման ճամբով լիբանանեան բանակին աջակցութիւնը:

«Լիբանան կարելորութիւն կ'ընծայէ Փարիզի մէջ 5 մարտին գումարուե-



լիք բանակի եւ ներքին ապահովութեան ուժերու աջակցութեան խորհրդածողովի Մատրիտի մասնակցութեան», նշեց հանրապետութեան նախագահը:

Շար.ը՝ էջ 8

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՄՕՏ ԻՐԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ

Երկուշաբթի, 2 փետրուար 2026-ին, Արամ Ա. Եւսեփառ հայրապետին պէցելեց Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մուժթապա Ամանի:

Դեսպանը ընդհանուր գիծերով ներկայացուց Իրանի պարզած ներկայ կիճակը եւ շրջանին մէջ խաղաղութեան հաստատման գծով անոր մօտեցումները: Ան նաեւ անդրադարձաւ Զայաստանի եւ Իրանի գործակցութեան:

Զանդիպման աւարտին, դեսպան Ամանի յայտնեց, որ շուտով պիտի վե-



րադառնայ Իրան եւ Լիբանանի մէջ նախապէս ծառայած դեսպան մը պիտի փոխարինէ զինք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ



Զայաստանի պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեան ընդունած է Զնդկաստանի զինուած ուժերու պաշտպանութեան ընդհանուր հրամանատար գոր. Անիլ Չաուհանը:

Զայաստանի պաշտպանութեան նախարարութեան համաձայն, Չաուհան յայտնած է Զնդկաստանի զինուած ուժերու պատրաստակամութիւնը՝ շարունակելու համագործակցութեան զարգացումը առկայ ուղղութիւններով եւ նախաձեռնելու փոխադարձ

Շար.ը՝ էջ 8

«ՄԻՆՉԵՒ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՅՈՒՆԻՍԿՈ ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՄԵՆԸ ԿՐԱՆԸ ԽԱՂԱՂՈՒԹԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆԵՆԸ»

Կ'ԸՍԵ ԶԱՍԱՆԿԻԼԻԵՒ



Մինչեւ Զայաստանի մէջ հերթական ընտրութիւնները, այսինքն՝ մինչեւ այս տարուան յունիսը, մենք կրնանք խաղաղութեան պայմանագիր կնքել: Այս մասին Ազրպէյճանի խորհրդարանի նիստի ընթացքին յայտարարած է Ազրպէյճանի երեսփոխան Կուտրաթ Զասանկիւլիե:

Անոր համաձայն, ատոր համար Զայաստան պետք է պարտաւորութիւն ստանձնէ, որ իր նոր սահմանադրութեան մէջ Ազրպէյճանի նկատմամբ «տարածքային պահանջներ» պիտի չըլլան:

Շար.ը՝ էջ 8

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆԵՐՈՒՆ ԱՐՈՒՆԵՐԸ ԿԸ ՎԵՐՅՈՒՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵՒՆ



Այսպէս կոչուած Նախիջեանի ինքնավար հանրապետութեան սահմանադրութեան նախաբանը կը փոխուի. Մոսկուայի եւ Կարսի պայմանագիրներուն անուանումները կը վերցուին Նախիջեանի սահմանադրութենէ:

Ազրպէյճանի պետական ԱՓԱ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ ատիկա արտացոլուած է Ազրպէյճանի Զանրապետութեան «Նախիջեանի ինքնավար հանրապետութեան սահմանադրութեան փոփոխութիւնները հաստատելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծին մէջ, որ երկրորդ ընթերցումով ըննարկման դրուած է Ազրպէյճանի խորհրդարանի նիստին:

Շար.ը՝ էջ 8

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՎՐԱՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕՐԱՅԻՆ ՅԱՐԶԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԸԱՐՔ



Իսրայելեան օդուժը երեկ յարձակում գործեց Ան-սարիէ եւ Էլէյլա գիւղերուն վրայ՝ պատճառելով զոհ մը եւ 8 վիրաւորներ:

Իսրայելեան բանակը զգուշացուց Զանա եւ Զֆարթըպնիթ գիւղերու բնակիչները, թէ Յըզպալլա-յի պատկանող ենթակառոցներու վրայ յարձակում պիտի գործէ, մասնաւորաբար իբրեւ թիրախ նկա-տելով Զֆարթըպնիթի մէջ շէնք մը, որ աւելի ուշ հար-ւածեց, ապա յարձակում գործեց Այն Զանա գիւղին վրայ:

Իսրայելեան բանակը պնդեց, թէ հարաւային Լի-բանանի մէջ Յըզպալլայի զէնքի պահեստանոցներ հարուածած է:

ՖԻՆԻԼ «ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՄԵՁ ՏԵՂԵԿԱՅՈՒՅ, ՈՐ ԵՐԷԿ ԿԱՊՈՅՑ ԳԻԾԻՆ ՄՕՏ ՕԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԱԾ Է՝ ՆԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆԻԹ, ՈՐ ԱՆՈՆՑ ԽՕՍՔՈՎ ԹՈՒՆԱՒՈՐ ԶԷ»



Ֆինիլ յայտարարեց, թէ իսրայելեան բանակը կիրակի առտու իրենց տեղեկացուցած է, թէ Կապոյտ զինն մօտ օդային գործողութիւն պիտի կատարէ՝ նետելու համար քիմիական նիւթ մը, «որ անոնց խօսքով թունաւոր չէ»:

«Իսրայելեան բանակը ըսաւ, որ խաղաղապահ ուժերը պէտք է հեռու եւ ծածկի տակ մնան, ինչ որ անոնց ստիպեց անելի ջան տաճ գործողութիւն ջըն-ջելու», նշեցին խաղաղապահ միջազգային ուժերը:

«Այս աշխատանքը անընդունելի է եւ կը հակասէ

Շար.ը՝ էջ 8

ՖԱՅԻԱՏ. «ԻՍՐԱՅԷԼԱՅԻՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՈԿԱՆԱԻՈՐԸ «ՄԵԶԱՆԻՉՄ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԻՍԿԱԿԱՆ ԽԵՂԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾԵՑԻՆ»



Հաւատարմութիւն դիմադրութեան երեսփոխա-նական պլոքի անդամ Ալի Ֆայիատ յայտնեց. «Իս-րայելացի թշնամին եւ անոր դաշնակիցները կը կար-ծեն, թէ մեր ժողովուրդին դէմ սպանութեան, քանդու-մի եւ տեղահանութեան թշնամական արարքները շարունակելը այս ժողովուրդը պիտի մղեն ընկերկ-ման, նահանջի եւ անձնատուր ըլլալու թշնամիին, որ սահման չի ճանչնար, այլ անձնատուութիւն, տիրու-թիւն, գերիշխանութեան ու անվտանգութեան ուտ-նահարում կ'ուզէ»:

«Բացայայտ կերպով կ'ըսենք՝ մեր ժողովուրդը պիտի չնահանջէ, պիտի չընկրկի, անձնատուր պիտի չըլլայ եւ իր ինքնապաշտպանութեան իրաւունքը պիտի չզիջի: Ան կառած է իր ազգային սկզբունքնե-րուն եւ պետութեան կոչ կ'ուղղէ՝ կառչելու այդ սկզ-բունքներուն, որոնք են՝ խորայելացիի հեռացումը մեր հողերէն, գերիներուն տուևդարձը, թշնամական արարքներու դադրեցումը, սահմանամերձ գիւղերու բնակիչներու առանց նախապայմանի իրենց գիւղեր, տուններ ու դաշտեր վերադարձը եւ վերաշինութեան հոլովոյթի ձեռնարկումը», շեշտեց Ֆայիատ:

Շար.ը՝ էջ 8

ՀՄԸՄ-Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԱԿԱՆ 52-ՐԴ ԺՈՂՈՎ



ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային ներկայացուցչական 52-րդ ժողովը տե-ղի ունեցաւ 30 եւ 31 յունուար եւ 1 փետրուար

2026-ին, «Աղբալեան-ՀՄԸՄ»- մար-գամշակութային համալիրի «Հրայր Մարուխեան» սրահին մէջ: Ժողովին մասնակցեցան միութեան մասնաճիւ-ղերէն 63 իրաւասու ձայնով ներկայա-ցուցիչներ, ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջա-նային վարչութեան ներկայացուցիչ, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ եղբ. Յակոբ Խաչե-րեան եւ խորհրդակցական ձայնով 45 հրաւիրեալներ, ընդամենը՝ 108 մաս-նակիցներ:

Ներկայացուցչական ժողովը մա-նրամասն քննութեան ենթարկեց դեկ-տեմբեր

2023-էն յունուար 2026-ի ՀՄԸՄ-ի

Լիբանանի Շրջանային վարչութեան գործունեութիւնը, զնահատելի նկա-տեց կատարուած աշխատանքները եւ ապագայի հաշուոյն ներկայացուց առաջարկներ:

Եռօրեայ աշխատանքներու աւար-տին, ժողովը 2026-2027 շրջանին հա-մար

ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութիւնը ընտրեց հետեւեալ կազ-մով.

Եղբ. Իշխան Եղիայեան

Եղբ. Հրայր Մելիսեան

Եղբ. Ֆուատ Մուրատեան

Եղբ. Չաւէն Տէր Պետրոսեան

Եղբ. Հրայր Սեթյեան

Քոյր Անի Ճուգուլեան

Եղբ. Գաթ Պալթաճեան

Քոյր Մարալ Գուլաճեան

Քոյր Լուսին Գազանճեան

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

●ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ հեղինակութիւն մը «Անպա» օրաթերթին՝ մեջբերելով արեւմտեան դիւանագիտական աղ-բիւր մը. «Կացութիւնը մեծ համեմա-տութեամբ դէպի կարգաւորում կ'ուղղ-ւի, սակայն առանց պատերազմի հա-ւանականութիւնը ջնջելու: Սակայն հարցումը հետեւեալն է. այս կարգա-ւորման մէջ Լիբանանի տեղը ո՞ր է: Լի-բանանը անոր ծիրին մէջ պիտի ըլլա՞յ, թէ՞ առաջնահերթութիւնները այլուր են եւ զայն կը շրջանցեն»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ աղբիւրներ «Ժումիւ-րիա» օրաթերթին. «Ինչ որ մտաւա-խութիւնները կ'աւելցնէ այն է, որ իրա-նեան թղթածրարը կրնայ ստանալ անակնկալ ցնցումներ, որոնցմէ ուղղա-կի կերպով կ'ազդուի լիբանանեան կացութիւնը, սակայն լիբանանեան առումով աւելի կարեւորը բոլոր առըն-չակիցներու փոխհասկացողութիւննե-րէն դուրս չգալն է, որովհետեւ մար-տահրաւերներու մէջ մտնելը կրնայ բո-լորին համար ծանր հետեւանքներ ու-նենալ»:

●«ՆԻՏԱ ՌԻԹԱՆ» օրաթերթի տե-ղեկութիւններուն համաձայն, «նախա-գահ Աունը Սպանիոյ հետ պիտի ջըն-նարկէ եւրոպական ուժերու ՖԻՆԻԼ-ին մասնակցութիւնը, որովհետեւ Սպանիան անոր ամենէն մեծաթիւ մասնակցութիւն բերող պետութիւննե-րէն է, եւ եւրոպական կարգ մը պետու-թիւններ իրենց ուժերը ՖԻՆԻԼ-ի պա-մանաժամի աւարտէն ետք հարաւի մէջ պահելու փափաք ունին»:

●ՔԱՂԱՔԱԿԱՆ լաւատեղեակ աղ-բիւրներ «Լիուա» օրաթերթին. «Ու-

շադրութիւնները ուղղուեցան Միաց-եալ Նահանգներ, ուր կ'այցելէ բանա-կի հրամանատարը, որ ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ հանդիպում պիտի ունենայ եւ շարք մը թղթածրարներու, մասնաւո-րաբար բանակի առաքելութեան եւ անոր աջակցութեան շուրջ բանակցու-թիւններ պիտի վարէ»:

●«ԱՆՊԱՐ» օրաթերթ. «Այս շաբ-թուան ամենէն նշանակալից զարգա-ցումը բանակի հրամանատար գոր. Ռուտովֆ Հայքալի այցելութիւնն է Միացեալ Նահանգներ, ուր շարք մը հանդիպումներ պիտի ունենայ ամերիկե-ան բանակէն հրամանատարներու ու Քոնկրեսի մէջ լիբանանեան հարցերու եւ լիբանանեան բանակին աջակցու-թեան առնչակից յանձնախումբերու հետ, ինչպէս նաեւ Ուաշինկթընի մէջ լիբանանեան դեսպանատան կողմէ կազմակերպուած արարողակարգա-յին հանդիպումներ պիտի ունենայ»:

«Կը նախատեսուի, որ Հայքալ վե-րադարձի ճամբուն վրայ այցելէ Ֆրան-սա՝ քննարկելու համար Միացեալ Նա-հանգներ իր այցելութեան արդիւնք-ներն ու անոնց ազդեցութիւնը Փարիզը հետաքրքրող թղթածրարներու վրայ, ներառեալ լիբանանեան բանակին աջակցութեան համար մարտին նա-խատեսուած խորհրդածողովի պատ-րաստութիւններուն վրայ»:

●«ԱՆՊԱՐ» օրաթերթը կը նշէ, որ բանակի հրամանատար գոր. Ռուտովֆ Հայքալ Միացեալ Նահանգներու մէջ

Շար.ը՝ էջ 8

«ԿԻԼԻԿԻԱ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ»-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ՆԻՍՏ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Կիլի-կիա վերլուծական հարթակ»-ի հերթական առցանց նիստը կայացաւ կիրակի, 1 փետրուար 2026-ի երե-կոյեան ժամը 6:00-ին, Արամ Ա. վեհափառ հայրապե-տին նախագահութեամբ:

Լիստի առաջին օրակարգով քննարկուեցան Սու-րիոյ, Իրանի եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի վեր-ջին իրադարձութիւնները: Վեհափառ հայրապետը պարզեց թե՛ իրավիճակներու մէջ գտնուող մեր թե-մերու եւ ազգային կառոյցներու պատասխանատու-ներուն հետ իր ունեցած բազմաթիւ հաղորդակցու-թիւնները:

Ժողովականները քննարկեցին այս իրադարձու-թիւններուն մէջ քրտական գործօնի դերակատարու-թեան վերափոխման, Անգարայի աշխուժացման եւ այդ երեւոյթներուն հետ կապուած հաւանական հե-տեւանքները:

Յատուկ օրակարգով քննարկուեցան նաեւ Իրա-նի եւ յատկապէս մեր համայնքին հետ աղերս ունե-ցող խնդիրները՝ նկատի ունենալով իրանահայ երեք թեմերու կացութիւնը:

Օրակարգի առանձին կէտ էր Հայաստանի իշխա-նութիւն-եկեղեցի խորացող տագնապն ու էջմիած-նական սրբազաններու դէմ յարուցուող քրեական դատերը: Վեհափառ հայրապետը յայտնեց, որ յա-ճախակի կապի մէջ է Գարեգին Բ. կաթողիկոսին, ինչպէս նաեւ սփիւռքահայ կազմակերպութիւններու պատասխանատուներուն հետ, անախընթաց այս տագնապի յաղթահարման համար: Ժողովականնե-րը անընդունելի գտան իշխանութեան կողմէ պա-ռակտիչ այս ընթացքին շարունակութիւնը՝ ընդգծե-լով, որ պառակտումի ալիքը հասած է նաեւ սփիւռքի մէջ գործող էջմիածնական թեմեր, եւ շեշտելով, որ հայ եկեղեցւոյ բարեկարգումը, եկեղեցական կանոն-ներու համաձայն, եկեղեցւոյ ներքին խնդիրն է:

Ժողովի աւարտին Արամ Ա. վեհափառ հայրապե-տը իրազեկ դարձուց ժողովականները Զանա ալ-ցելութեան ընթացքին վարչապետին հետ ունեցած հանդիպումին մանրամասնութիւններուն, ինչպէս նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու արեւել-եան շրջանին մէջ նախաձեռնուած տարբեր եկեղե-ցիներու դեկլարանքներուն կողմէ Լեւոն ԺԴ. պապին կատարուած զրաւոր դիմումին մասին՝ Արցախի դե-կլարութեան եւ ռազմագերիներու ազատ արձակ-ման պահանջով:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ

- Զաջալերելով «Ազգակ»-ի աշխա-տանքները, «Փէյ Փալ»-ի միջոցով՝

Սեւան Հոթիէ (Փարիզ)

35\$


ՄԱՋԱՊԵ

«ՍՈՒՐԵ ՆԵՐՍԵՍ
ՇՆՈՐԱՍԻՆ»

(1102-1173)

Հեղինակ՝
Մեսրոպ Հայունի

«Մխիթար»
Մատենաշար 47
Այնճար, 2024



ՄԱՀԱԶԴ

Տիար տոքթ. Անթուան Թաշճեան
Հանգուցեալ Արուսեակ Պողոսեանի ընտանիք
Տիկին Ռոզին Պուտուսեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ Ասարեան եւ զաւակը
Տիկին Ալիս Թաշճեան եւ զաւակունք (Զանաւատ)
Հանգուցեալ Գեորգ Թաշճեանի ընտանիք
Տիկին Սօսի Թաշճեան եւ ընտանիք
Տիկին Յասմիկ Թեհեան եւ զաւակունք

(Միացեալ Նահանգներ)
Տիար Մեսրոպ Թաշճեան եւ զաւակունք
(Միացեալ Նահանգներ)

Տիար Յակոբ Թաշճեան եւ ընտանիք (Աւստրալիա)
Թաշճեան եւ Պուտուսեան ընտանիքներ
Պողոսեան եւ Ասարեան ընտանիքներ
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, քրոջ, մօրաքրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ԹԱՄԻՉԱ ԹԱՇՃԵԱՆԻ

(ծննալ՝ Պոսուսեան, 1947-ին, Պէյրութ)

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 2 փետրուար 2026-ի առաւօտեան:

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կա-տարուի այսօր՝ երեքշաբթի, 3 փետրուարին կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանա-տունը:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահաղոյ:
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին նախքան եւ յետ թաղման արարողութեան, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00-ը, եկեղեցւոյ սրահին մէջ:
●Շանթթ.- Փոխան ծաղկեպսակի՝ նուիրատուու-թիւնները կատարել Ս. Աստուածածին եկեղեցւոյ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՀՅԴ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԴՐՕՇԱԿ»-Ի 2026-Ի ԱՌԱՋԻՆ ԹԻԻԸ


ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՌԵԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ ԹՈՒԱՅԻՆ ԶԱՐՏԵՍԻ ՄԸ

Իր նոր տարեշրջանը «Դրօշակ»-ը կը սկսի հայութեան դիմագրաւած դժուարին մարտահրաւերներուն ուղղակի, անկեղծ եւ համարձակօրէն արձագանգելու կանձնառութեամբ: Ազգային-պետական կանքի դիմագրաւած եւ սպասուող փորձութիւններուն կը վերաբերի նոր տարուան առաջին թիւի «Առաջնորդող»-ը:

Անի Մելքոնեանը՝ կատարելով 2025 թուականի ամփոփումը, ընթերցողին կը յիշեցնէ Նախորդ տարուան քաղաքական կարեւոր իրադարձութիւնները:

Նկատի ունենալով դրացի ու բարեկամ Իրանի մէջ կատարուող, ինչպէս նաեւ հնարաւոր իրադարձութիւններուն ազդեցութիւնը Հայաստանի վրայ՝ «Դրօշակ»-ը կը շարունակէ ուշի ուշով հետեւիլ այդ զարգացումներուն: Այս անգամ քանի մը յօդուածով պաշտօնաթերթը տարբեր տեսանկիւններէ կը լուսաբանէ այդ անցուդարձը:

«Փաղափարական» խորագիրին տակ Արամ Շահնազարեան կ'անդրադառնայ ՀՀԴ երկու տեսաբաններ Փարեզին Խաժակի եւ Միքայէլ Վարանդեանի՝ զուգահեռ կատարելով որոշ հարցերու վերաբերեալ անոնց տեսակէտներուն միջեւ: Ան կը գրէ. «Վարանդեանի «Համաժողովրդական բանակ» տեսութիւնը եւ Խաժակի «Ազգի ու ազգային գաղափարախօսութեան» ըմբռնումը որպէս հայ քաղաքական մտածողութեան արգասիք՝ միաւորում են մէկ ամբողջական համակարգի մէջ, որոտը պաշտպանութիւնը, քաղաքական կամքը եւ ազգային ինքնագիտակցութիւնը դրսեւորում են որպէս փոխկապակցուած եւ անբաժանելի սկզբունքներ»: Ժամանակի յայտնի ազգային գաղափարախօսներ Փարեզին Խաժակի եւ Միքայէլ Վարանդեանի տեսական դատողութիւններուն անդրադառնալով՝ հեղինակը լուսարձակի տակ կը բերէ այն, որ



անոնք որքան արդիական են այսօրուան մեր ազգային եւ պետական կեանքին համար:

Ցեղասպանագէտ Մարի Յովհաննիսեան կ'անդրադառնայ Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգիլելու եւ պատժելու մասին 1948-ին ՄԱԿ-ի ընդունած բանաձեւին, կը ներկայացնէ անոր այն իրաւական բացերը, հայեցակարգային թերութիւնները, որոնցմէ օգտուելով՝ այսօր աշխարհին մէջ կը կատարուին ցեղասպանական գործողութիւններ: Մատնանշելով փաստաթուղթի շարք մը հիմնարար բացերը՝ հեղինակը կը շեշտէ, որ բանաձեւի վերանայման եւ կատարելագործման ենթարկելու պահը հասունցած է արդէն:

Արեւմտահայոց հարցերու ուսումնասիրութեան կեդրոնի տնօրէն Հայկազուն Ավրիցեանը 2025 թուականին յօդուածաշարով «Դրօշակ»-ի ընթերցողին ներկայացուց համշէնահայութեան ինքնապաշտպանական պայքարը Հայոց ցեղասպանութեան շրջանին: Այս նիւթն մեկնելով՝ ան «Դրօշակ»-ի այս թիւին մէջ կը ներկայացնէ կազմակերպուած վրէժխնդրու-

թեան այն կառոյցը, որուն միջոցով, ՀՀԴ 9-րդ Ընդհանուր ժողովին որոշած «յատուկ գործէն» առաջ համշէնահայ քաջ հայորդիները Համշէնի տարածքին մէջ կը պատժէին տեղւոյն հայութեան կոտորածներու հարցով ուշադրութիւն գրաւած թուրք ռճրագործները: Իսկ այս հերոսական ու անհաւանական սիրանքի ոգեշնչողն ու առաջնորդը «Նենեխիս»-ի գործողութիւններէն յայտնի վրիժառու Միսաք Թորլաքեանն էր:

Թիւին մէջ կան նաեւ տարբեր յօդուածներ, որոնք կարելի է ընթերցել՝ <https://www.arfd.am/wp-content/uploads/2026/01/%D4%B4%D6%80%D6%85%D5%B7%D5%A1%D5%AF-%D5%A9%D5%AB%D5%BE-1-2026-%D5%A9.pdf>

«ԴՐՕՇԱԿ»-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՆԵՐ ԵՒ ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԻ ՇՈՒՐՋ

Իշխանութիւնը, որը մշտապէս խաբում է սեփական ժողովրդին, օտարում է նրանից, յայտնում է նրա հետ հակադրութեան մէջ եւ իր հետագայ պաշտօնավարումը ծառայութեան առաքելութիւնից վերածում է դիմակայութեան, ծագող հակասութիւններն ամէն կերպ յաղթահարելու շարունակական ճիգի:

Եթէ անդրադառնանք Հայաստանի իշխանութիւնների վարքագծին, ապա կ'արձանագրենք, որ գործող իշխանութիւնը մշտապէս ձգտել է ներքաղաքական կեանքում օրակարգ թելադրել՝ չդադարող հետապնդումներով ձերբակալութիւններով ու զանազան ձեռնածութիւններով նախաձեռնութիւնը պահել իր ձեռքում: Այս նոյն մարտավարութեամբ անցնող ամիսներին եւս իշխանութեանը յաջողուեց հասարակական, քաղաքական շրջանակներին շեղել ըստութիւնների նախօրեակի համար վտանգաւոր ներքաղաքական սրացումներից: Նախընտրական շրջանը առանց այդ էլ քաղաքական, հասարակական աշխուժացման ժամանակահատուած է, իսկ Հայաստանում առկա դժոհութիւնների պայմաններում այն կարող է ձևագնդի պէս ուռճանալ եւ անկասելի ուժով ազդել իրադարձութիւնների ընթացքի վրայ:

Հետեւաբար իշխանութեանն անհրաժեշտ է իր օրակարգերի շըրջագծում պահել բոլորին առնուազն մինչեւ զարուն, երբ հնարաւորութիւն կ'ունենայ ծրագրուած միջոցառումներով ու քայլերով ուղղորդելու գործընթացները: Յիշենք, որ այս շրջանում Հայաստանում տեղի են ունենալու եւրոպական երկու մեծ համաժողովներ, որոնց ժամանակ արեւմտեան առաջնորդները շատ աւելի շռայլ կը լինեն հայ ժողովրդին եւրոպական ապագայ խոստանալու հարցում, ամենատարբեր բնոյթի աջակցութիւն ցոյց կը տան գործող իշխանութեանը: Անշուշտ, սրան զուգահեռ, կը լինեն այլ «մասկընկալներ», երբ որոշակի «բարեկամական» քայլերով Ազրպէյճանն ու Թուրքիան կարող են իրենց լուրան ներդնել ԶԴ-ին իշխանութեան վրայ պահելու գործում (արդէն իսկ «Նախընտրական պէնզինը» փոքր քանակներով Ազրպէյճանը վաճառում է Հայաստանին, երեւոյժ տասնամեակի ընդհատուից յետոյ Ազրպէյճանի տարածքով ապրանքատար գնացք է մտել Հայաստան, փոխանակման կարգով Պաքուից հայ քաղաքատարկելներ են վերադարձուել Երեւանին): Սրա կողքին ծաւալում է խաղաղութեան մասին կեղծ խօսույթը՝ տպաւորութիւն ստեղծելու համար, թէ այն այլեւս կայացած եւ անդառնալի իրողութիւն է:

Տեւական ժամանակ Նիկոլ Փաշինեանը հանրային ուշադրութիւնն ուղղորդում է Հայոց եկեղեցու դէմ ձեռնարկած ասպատակութիւնների կողմ: Որ ազգային ինքնագիտակցութիւնն արմատախիլ անելու առաջադրանքը որդեգրած Փաշինեանի համար 1700-ամեայ անկախ եկեղեցու կազմալուծումն ու ենթարկումը հակազգային ծրագրերին ռազմավարական նպատակ է՝ կասկած չկայ, միաժամանակ այն շեղող թիրախ է ծառայում, երբ եկել է տրուած խոստումների համար հաշուետուութիւն ներկայացնելու ժամանակը:

Ապագայի խոստումով իշխանական մանտաթների տիրացած Փաշինեանն Արցախը տարել է վերջնական կորստի, ճակատագրական փորձութիւնների առջեւ Է կանգնեցրել Հայաստանը, իր ղեկավարած խմբակի հետ նա չի կարող պարծենալ որեւէ ասպարեզում ձեռք բերած յաջողութիւններով: Աւելի'ն. Փաշինեանի իշխանութիւնը հասաւ ու անցաւ Նախորդներին բոլոր այն մեղքերում, որոնցում մեղադրում էր վերջիններին: Այս իշխանութիւնը կորցրեց բոլոր այն «յաղթաթղթերն» ու «հմայքները», որոնց շահարկմամբ եկել էր իշխանութեան: Խոստացուած ժողովրդավարութեան փոխարէն՝ Նիկոլ Փաշինեանը երկիրը վերածեց բռնապետութեան, իշխանութեան թելերի հակակշռելիութիւնը մեծացնելու փոխարէն՝ արժեզրկեց վերջիններին՝ վերածելով իրեն սպասարկող կցորդներին: Այդ դերաբաշխման մէջ ամենակեղտոտ ու անշնորհակալ դերը յանձնարարուեց ուժային կառոյցներին: Բանտերը լցուեցին անհիմն մեղադրանքներով ձերբակալուած քաղաքատարկելներով: Մեծ արագութեամբ հարստացան Փաշինեանի հարազատները, մերձավորներն ու խմբակիցները:

Պատահական չէ, որ որպէս փտածութեան բուրգի գլուխ՝ Փաշինեանն ատամներով պաշտպանում է համակարգի արատաւորուած անդամների իւրաքանչիւրին, հասնաւալով, որ եթէ համակարգը ճաքեր տա, բացայայտումները կարող են տարածուել ու խորանալ եւ փլուզել աւագի վրայ սարքուած ողջ կառոյցը: Փաշինեանի յաղթաթղթերից մէկը Նախկիններին պատժելու խոստումն էր, այնինչ



իր մեղադրանքներից մնացին չիմսաւորուած, կեղծ ամբաստանութիւններ, որոնք ունեն խիստ անձնաւորուած բնոյթ, իսկ նոյն ժամանակ իշխանութեան շուրջը խմբուեցին Նախկին համակարգի արատաւորուած ներկայացուցիչները: Երբ իր շարժմանը զանգուածային աջակցութիւն էր անհրաժեշտ, Փաշինեանը նուազագոյն եկամուտ ունեցող տարբեր շերտերին խոստացաւ, թէ ազատելու է հարկային բեռից, նուազեցնելու է տուրքերը, այնինչ այսօր ողջ հասարակութիւնը կքած է աննախադէպ չափերի հասած հարկերի, տուրքերի եւ տուգանքների բեռան տակ:

Հանրութեանն իր կողմը գրաւելու գրաւիչ «խայծերից» մէկն ընտրական գործընթացները թափախցիլ եւ օրինական դարձնելու խոստումն էր, սակայն վերջին տարիների տեղի ունեցող համայնքային մակարդակի ընտրութիւնները բացայայտում են, որ Փաշինեանը պատրաստ է ոտնահարելու ամէն մի օրէնք ու սկզբունք՝ թոյլ չտալու համար, որ ժողովրդի մօտ հասունանան իշխանափոխութեան յոյսերը: Նիկոլ Փաշինեանը վերականգնեց վաղուց մոռացուած հոսանքն անջատելու եւ ընտրական արկերը լցոնելու ընտրակեղծարարութեան հնացած հնարքը: Այլ հարցերի մէջ յաջողուեց մոռացութեան մատնել Վրաստանի մաքսաւորների կողմից բռնագրաւուած 190.000 նոր տպուած անձնագրերի առեղծուածը: Հաւանական է, որ կեղծ անձնագրերով ընտրութիւններ անցկացնելու հնարքը փորձ արդի կիրառելու առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ:

Արձանագրենք, որ Նիկոլ Փաշինեանին վաղուց լքել է «ժողովրդի ծոցից դուրս եկած», արդարութեան համար պայքարող անկաշառ հայրենասերի առասպելը:

Մտնելով արտաքին ուժերի հետ մութ գործարքների մէջ, միւս կողմից՝ նախապէս չունենալով արտաքին քաղաքական գործունեութեան որեւէ փորձառութիւն, նա ոչ միայն տապալեց ու գլխիվայր շուռ տուեց Արցախի հարցում ձեւաւորուած բանակցային գործընթացի տրամաբանութիւնը, այլեւ պատանդ դարձաւ արտաքին ուժերին, որոնք նրան պարտադրում են վարելու ազգային շահերին հակասող քաղաքականութիւն: Նիկոլ Փաշինեանը խօսում է ոչնչով չամրագրուած խաղաղութեան հաստատման մասին, երբ «խաղաղատեր» հարեւանը ռազմական դիրքերն է ամրապնդում Հայաստանից դրաւած տարածքներում, Պաքում անօրինական դատավարութիւն է իրականացնում հայ քաղաքական ու ռազմական ղեկավարութեան դէմ: Ազրպէյճանը յայտարարում է, որ անվերապահ կեղի իրաւունքներ ունի Չանգեզուրի միջանցքը շահագործելու հարցում, ինչպէս եւ հրապարակախօսել յայտարարում է, թէ Հայաստանը Արեւմտեան Ազրպէյճանն է: Նոյն ժամանակ Չանգեզուրի՝ որպէս փանթուրանիզմի ճանապարհի հետ կապուած իր ծրագրերը չի թաքցնում Թուրքիան: 2026 թ. յունիսի 6-ին Բ. Ալիեւը լրագրողների առջեւ հրապարակախօսեց յայտարարել է. «Այսօրպէս աշխարհում միջազգային իրաւունք գոյութիւն չունի. բոլորը պէտք է մոռանան դրա մասին: Կայ ուժ, կայ համագործակցութիւն եւ կայ դաշինք»:

Փարիզի սրտին մէջ գտնուող «Սամուէլեան» գրատան մամուլի արխիւները, որոնք հայ մշակութային ժառանգութեան կենսական յուշարձաններն են, արհեստական բանականութեան (ԱԲ) միջոցով կը վերածուին թուային քարտէսի մը:

«Calfa»-ը եւ իր գործընկերները թեւակոխած են նոր փուլ մը՝ բացայայտելու 20-րդ դարու Փարիզի հայկական խանութները, միութիւնները եւ ընկերային կեանքը:

1930-ին հիմնադրուած եւ ուսումնասիրողներու, լրագրողներու եւ պատմաբաններու համար հանդիպման վայր ծառայած «Սամուէլեան արեւելեան գրատուն»-ը (Librairie orientale Samuélian) այժմ թուային վերափոխման կիզակետին կը զըտնուի: «Սամուէլեան» գրատան արխիւները թուայնացնելու ծրագիրը, որ սկսած էր 2024-ին, կ'ընդլայնէ իր ծիրը՝ թուային քարտէսագրման միջոցով հետապնդելու հայկական հետքերը Փարիզի պատմական խճանկարին մէջ:

Ծրագրին առաջին փուլով պահպանութեան տակ առնուած է 1920-1975 տարիներուն հրատարակուած հայկական թերթերու հսկայական հաւաքածոյ մը՝ 10.000-էն մինչեւ 15.000 էջերու ծաւալով: Այս արխիւը, որ կը պարունակէ Ֆրանսայի, Լիբանանի, Եգիպտոսի, Յունաստանի եւ Թուրքիոյ մէջ լոյս տեսած առաւել քան 70 թերթեր, իր մէջ կը պահէ հայկական սփիւռքի ընկերային եւ մշակութային յիշողութիւնը:

Այս թերթերը կարդալու ընթացքին «Calfa»-ի խումբը նկատած է միութիւններու, առեւտրական հաստատութիւններու եւ գրասենեակներու մեծ թիւով հասցէներ: Անոնք որոշած են այս տուեալները վերածել Փարիզի քարտէսի մը, որ ցոյց կու տայ ժամանակի ընթացքին այդ վայրերու փոփոխութիւնը: Ծրագրին նոր՝ «Փարիզ» գլուխը կը նպատակադրէ ներկայացնել քաղաքին մէջ հայ համայնքի բնակչութիւնը եւ տնտեսական գործունեութիւնը՝ 20-րդ դարու սկիզբէն:

Համագործակցութիւն «BnF DataLab»-ի եւ արհեստական բանականութեան հետ ծրագրին ամենեւեւ հետաքրքրական երեւոյթներն մէկը կը վերաբերի արհեստագիտական ոլորտին: Կը մշակուի արհեստական բանականութեան (ԱԲ) յատուկ նախատիպ մը՝ արխիւներուն մէջ գտնուող ծանուցումները ուսումնասիրելու եւ պատմական հայկական առեւտրական հաստատութիւնները յայտնաբերելու համար: Այս աշխատանքին ընդառաջ՝ գործընկերութիւն հաստատուած է Ֆրանսայի Ազգային գրադարանի Նորարարութեան բաժինին՝ «BnF DataLab»-ի հետ:

Արհեստական բանականութեան նախատիպը մեքենաբար պիտի վերլուծէ թերթերու էջերուն մէջ գտնուող ծանուցումները եւ, այդ տեղեկութիւններու լոյսին տակ քարտէսագրէ 20-րդ դարու «Հայկական Փարիզ»-ը: Այսպիսով, անցեալի դերձակները, տպարանները, դարմանատունները եւ սրճարանները իրենց տեղը պիտի «վերագտնեն» թուային միջավայրի մը մէջ:

Ծրագիրը կը միաւորէ գիտութեան եւ մշակոյթի աշխարհի կարեւոր գերուծէ թերթերու էջերուն մէջ գլխաւորած այս ծրագրին համագործակցողներն են՝ BnF (Ֆրանսայի Ազգային գրադարան), EPITA (LRE տարալուծարան, «DECIDON» ծրագիր), Inalco (DALiH ծրագիր), Հայաստանի Ազգային գրադարան:

Ծրագիրը իրականութիւն կը դառնայ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան (Հայկական համայնքներու բաժանմունք) եւ Սամուէլեան ընտանիքի արժեքաւոր աջակցութեամբ:

Շուրջ տասնամեակ մը առաջ, «Սամուէլեան» գրատան փակումէն տըք, հոն գտնուող թերթերու հաւաքածոները սկսան ենթարկուիլ ժամանակի ազդեցութեան, իսկ որոշ փաստաթուղթեր դարձան չափազանց փխրուն՝ ձեռքով բռնելու համար: Շնորհիւ «Calfa»-ի մշակած «Գիրտերու տեսողական ճանաչման» (OCR/HTR) բարձր ճշգրտութեան արհեստագիտութեան՝ այս փաստաթուղթերը ոչ միայն կը փրկուին անհետացումէ, այլեւ կը վերածուին որոնելի եւ խմբագրելի թուային բնագիրներու, բաց՝ ակադեմական հետազօտութիւններու:

Ստացուած տուեալները եւ թուայնացուած էջերը հասանելի պիտի դառնան ամբողջ աշխարհին՝ Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի գլխաւոր գիտական գրադարանին (FSL) միջոցով: Այսպիսով, 20-րդ դարու հայկական սփիւռքի առօրեան եւ Փարիզի փողոցներուն վրայ անոր ձգած հետքերը պիտի փոխանցուին ապագայ սերունդներուն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելել calfa.fr/ կայքը:

ՊԵՅՐՈՒԹԸ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ ՀՈԼԻՎՈՒՏԻՆ «ԷՊԵԼ» ՍՐԱՀԻՆ ՄԷՁ՝ ՆՇԵԼՈՒ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 70-ԱՄԵԱԿԸ

Հայկազեան համալսարանի 70-ամեակի տոնակատարությունները, որոնք սկսած էին Նիւ Ծըրզիէն եւ շարունակուած՝ Նիւ Եորք, Երեւան, Տուպայ, Պէյրութ, Սոնթայ, Ռիատ, Գահիրէ, Աթէնք եւ Տոհա, յիշարժան ու շքեղ աւարտ մը ունեցան Լոս Անճելըսի մէջ՝ շաբաթ, 24 յունուար 2026-ին։ «Պէյրութը կը հանդիպի Յոլիվուտին» խորագիրին ներքոյ, մօտ 300 հոգեւոր առաջնորդներ, մանկավարժներ, շրջանաւարտներ, բարերարներ, համայնքային ներկայացուցիչներ եւ պատուարժան հիւրեր հաւաքուեցան Լոս Անճելըսի պատմական «Էպել» սրահը՝ յարգելու համալսարանի մնայուն ժառանգութիւնն ու ազդեցութիւնը։

Երեկոն համանախագահեցին համալսարանի հոգաբարձութեան անդամներ Թիսա Սեկել եւ Բաֆֆի Զենտիրճեան։ Այս ետևորի սուրբիւնը նաեւ եղաւ առիթ մը՝ յարգանքի տուրք մատուցելու երկարամեայ հոգաբարձու եւ բարերար Ճոյս Փիլիպոսեան Սթայնի՝ անոր տասնամեակներու շարունակական անսասան նուիրումին եւ ծառայութեան համար՝ Հայկազեան համալսարանին։

Յայտագիրը սկսաւ համանախագահներու ջերմ ողջոյնի խօսքերով, զորս ներկայացուցին պատուարժան հիւրերու խումբ մը, որոնք մէջ էին՝ Միացեալ Նահանգներու հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտերեանը, Միացեալ Նահանգներու Հայ առաքելա-



Պաշտօնական հիւրերու սեղան, կեդրոնը ծախելն աջ՝ վեր. Զենրիկ Շահնազարեան, Գեղամ արք. Խաչերեան, Յովնան արք. Տէրտերեան եւ վեր. դոկտ. Փոլ Հայտոսեան

Իր ելոյթին մէջ վեր. դոկտ. Հայտոսեան անդրադարձաւ ելոյթի նշանակութեան՝ ըսելով. «Մենք Հայկազեան համալսարանի 70-ամեակը կ'եզրափակենք Լոս Անճելըսի մէջ՝ շքեղ կերպով, սակայն այս աւարտը իրականութեան մէջ սկիզբ մըն է, նոր փուլ մը՝ արագ փոփոխուող աշխարհին մէջ։ Հայկազեան համալսարանին համար մեզ սահմանողը ոչ թէ համաշխարհային սպառնալիքներն են կամ տեղական անորոշութիւնները, այլ մեր անսասան նուիրումը՝ ապագայ սերունդները կրթելու մտարուեստութեամբ, միասնական ոգիով, բարոյական արժէքներով, հաւատքով եւ ուսման ու ծառայութեան հանդէպ ողջ կեանքի նուիրումով»։

Երեկոյի գագաթնակէտը եղաւ յարգել Ճոյս Փիլիպոսեան Սթայնը՝ Հայկազեան համալսարանին բերած իր բացառիկ ներդրումներուն համար։ Իր խօսքին մէջ Սթայն սրտագին երախտագիտութիւն յայտնեց հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբին եւ ներկայ բոլոր հիւրերուն։ Ան յիշեց, որ համալսարանի հիմնադրութիւնը կարելի դարձաւ Մարի Մեհակեանի (դուստրը՝ Հայոց ցեղասպանութեան նահատակ վեր. դոկտ. Արմենակ Հայկազեանի, որուն անունը կը կրէ համալսարանը), եւ անոր ամուսնոյն՝ Աւագ (Սթիվըն) Մեհակեանի մեծահոգի նուիրատուութեան շնորհիւ, ինչպէս նաեւ իր հօր՝ Սթիվըն Փիլիպոսեանի տեսլականին ու առաջնորդութեան միջոցով։ Ճ. Սթայն յիշեց, որ ամերիկեան ոճով համալսարան մը Պէյրութի մէջ հիմնելու գաղափարը ծնաւ 1955 թուականի ծինառատ մարտ երեկոյ մը՝ Փենսիլվանիոյ Ռետնըր քաղաքին մէջ գտնուող բարձունքի



Վեր. դոկտ. Ժան Խանճեան



Ղոկտ. Յասմիկ Պարան

կան եկեղեցւոյ Արեւմտեան թեմի առաջնորդ Գեղամ արք. Խաչերեանը, Զիւսիսային Ամերիկայի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան հոգեւոր հովիւ վեր. Զենրիկ Շահնազարեանը, Հայկազեան համալսարանի նախկին նախագահ վեր. դոկտ. Ժան Խանճեանը, Հայկազեան համալսարանի ներկայ նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսեանը, Հայկազեան համալսարանի հիմնադիր նախագահ վեր. դոկտ. Ժան Մարգարեանին կիկը՝ Ինկա Մարգարեան, Ամերիկայի Հայ աւետարանական ընկերակցութեան (ԱՅԱԸ) Վարչական խորհուրդի նախագահ Կերի Ֆիլիպսը եւ ԱՅԱԸ-ի գործադիր տնօրէն



Ճոյս Փիլիպոսեան Սթայն կը ստանայ իր յուշանուէրը

Սերժ Տ. Պուչաքճեանը։ Համանախագահները իրենց ողջոյնի խօսքերուն մէջ յիշեցին նաեւ Հայկազեանի նախկին Ֆիլկանց օժանդակ մարմինը, որ տասնամեակներ շարունակ անխնայ աշխատեցաւ համալսարանին նիւթաբարոյական ապահովելու, եւ որուն անդամներէն շատեր ներկայ էին այս հանդիսութեան։

Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Հայաստանի եւ Լիբանանի քայլերգներուն զեղեցիկ կատարումէն ետք՝ Նազանի Մնչերեանի կատարողութեամբ, Բ. Զենտիրճեան ներկայացուց Հայկազեան համալսարանի նախկին նախագահ վեր. դոկտ. Ժան Խանճեանը՝ նշելով, որ անոր առաջնորդութիւնն ու անսասան նուիրածութիւնը իր նախագահութեան ընթացքին համալսարանին վրայ մնայուն հետք ձգած են։ Ապա զայն բժմ հրաւիրեց բացման աղօթքի համար։ Իր աղօթքին մէջ վեր. դոկտ. Խանճեան յիշեց՝ Հայկազեան համալսարանի հիմնադիր անդամները, Ամերիկայի Հայ աւետարանական ընկերակցութիւնը եւ Մերձաւոր Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութիւնը։ Ան գոհութիւն յայտնեց Աստուծոյ՝ 1955-ին համալսարանը հիմնելու անոնց տեսլականին եւ հաւատքին համար, ինչպէս նաեւ՝ վերջին եօթանասուն տարիներուն ընթացքին Հայկազեանի առաքելութեան միջոցով օրինուած անհամար կեանքերուն համար։

Ապա ցուցադրուեցաւ տեսերիզ մը, որ կը ներկայացնէր համալսարանի հարուստ պատմութիւնը, ոգին եւ ժառանգութիւնը։ Այնուհետեւ Հոգաբարձուներու խորհուրդի նախագահ դոկտ. Յասմիկ Պարան ողջունեց հիւրերը իր գործընկեր հոգաբարձուներու անունով եւ ներկայացուց վեր. դոկտ. Փոլ Հայտոսեանը։ Իր խօսքին մէջ ան նշեց. «Վեր. դոկտ. Հայտոսեան կը մարմնաւորէ՝ բաց մտածողութիւն, արհեստավարժութիւն եւ փոխադարձ յարգանք։ Անոր համագործակցական մօտեցումն ու առողջ դատողութիւնը մեծապէս կը նպաստեն մեր խորհուրդի աշխատանքի արդիւնատուութեան ու իրագործումին։ Մեր նախագահին հետ գործակցիլը իսկական հաճոյք է»։

որուն։ Ան յիշեց, որ համալսարանի հիմնադրութիւնը կարելի դարձաւ Մարի Մեհակեանի (դուստրը՝ Հայոց ցեղասպանութեան նահատակ վեր. դոկտ. Արմենակ Հայկազեանի, որուն անունը կը կրէ համալսարանը), եւ անոր ամուսնոյն՝ Աւագ (Սթիվըն) Մեհակեանի մեծահոգի նուիրատուութեան շնորհիւ, ինչպէս նաեւ իր հօր՝ Սթիվըն Փիլիպոսեանի տեսլականին ու առաջնորդութեան միջոցով։ Ճ. Սթայն յիշեց, որ ամերիկեան ոճով համալսարան մը Պէյրութի մէջ հիմնելու գաղափարը ծնաւ 1955 թուականի ծինառատ մարտ երեկոյ մը՝ Փենսիլվանիոյ Ռետնըր քաղաքին մէջ գտնուող բարձունքի



Հանդիսավարներ Բաֆֆի Զենտիրճեան եւ Թիսա Սեկել

վրայ կանգնած իր հօր տան մէջ։ «Ամերիկայօրէն Հայկազեանը դարձաւ իմ հօր ամենամեծ տեսլականը», ըսաւ ան։

Համալսարանի ղեկավարութիւնը Ճ. Սթայնին յանձնեց յատուկ յուշանուէր մը՝ իբրեւ գնահատանք իր տասնամեակներու ծառայութեան, մեծահոգութեան եւ նուիրումին, որոնք անցնշելի հետք ձգած են հաստատութեան եւ անոր ուսանողներուն վրայ։

Տոնական մթնոլորտը ճոխացուցին աշխարհահռչակ հայ դաշնակցահար Վահագն Հայրապետեանն ու իր համոյքը, որոնք այս առիթով Երեւանէն ժամանած էին եւ երաժշտական յատուկ կատարումով հմայեցին ներկաները։

Տոնակատարութիւնը իր աւարտին հասաւ կարկանդակի հատումով՝ Հայկազեան համալսարանի օրհներգի հնչիւններուն ներքոյ, եւ փակման աղօթքով։ Այնուհետեւ ներկաները շարունակեցին երեկոն յետհանդիսութեամբ մը։

Անդրադառնալով երեկոյի ոգին՝ համանախագահները իրենց պատգամին մէջ ըսին. «Եօթանասուն տարի շարունակ Հայկազեան համալսարանը եղած է վայր մը, ուր քրիստոնեական հաւատքը, ակադեմական գերազանցութիւնը եւ հայկական ժառանգութիւնը կը միաձուլուին՝ կրթելու եւ ներշնչելու առաջնորդներու, մտածողներու եւ ծառայողներու սերունդներ։ Զաղաքացիական պատերազմի, տարածաշրջանային դժուարութիւններու եւ ծանր ֆինանսական ճգնաժամերու տասնամեակներուն ընթացքին անգամ համալսարանը մնացած է անսասան՝ ամբողջականութեան, ծառայութեան եւ մտաւոր հետազօտութեան հանդէպ իր ունեցած նուիրումին մէջ»։

ԼՈՒԻՉԱ ԶԱՆՊԱՇԵԱՆ

Ամերիկայի Հայ աւետարանական ընկերակցութեան հասարակութեան հետ կապերու պատասխանատու

Լոս Անճելըս, Զալիֆորնիա

ԱՐԱՐԱՏԸ՝ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

Այսօր, երբ կը խօսուի Արարատը մոռնալու եւ Արագածով ապրելու մասին, պարտք կը զգամ անգամ մը եւս բոլորին յիշեցնել, որ Արարատը մեր սրբութիւնն է, մեր ժողովուրդի յաւերժութեան խորհրդանիշը։ Յօդուածս այժմեական է այնքան, որքան Արարատն է սրբութիւն մեր ժողովուրդին համար։ Իւրաքանչիւր հայ, աշխարհի որ ափին ալ գտնուի, Արարատը սրբութիւն կը համարէ։ Ան մեր պորտալարն է կարծեք, որ մեզ կը կապէ մեր ազգի ծնունդին ու գոյութեան արմատներուն։

Չէի կրնար անտարբէր մնալ, երբ կը գտնուէի Հայաստան եւ ամբողջ ժամ մը, մեր սրբազան Մասիս լեռան գուգահեռ, մեքենայով կ'ընթանայի։

Ան'դ, ի՛նչ տառապանքով կը սեղմուէր սիրտս, եւ աչքերս կը լեցուէին արցունքով։ Իմ առջեւ կը բացւէր այն անմեռ խորհրդանիշը, որուն ստուերին տակ ձեւաւորուած էր հայուն ինքնութիւնը։ Մասիսը՝ սպիտակագգետ, վեհաշուք ու լուռ, կը նայէր դէպի Արաքս, կը դիտէր իր գաւակները՝ պատնէշի այն կողմը, որպէս մայր, որուն գաւակները փրկուած են արհաւիրքէն։

Աչքերուս առջեւ կը պարզուէր Մասիսի երկնաքեր, ուխտավայր գագաթը՝ սպիտակագգետ, վեհաշուք ու ծերունիի նման մշտամոգնօտ ամպերով շրջապատուած, ինչպէս՝ մօրուք մը, որ աւելի կը պանծացնէ անոր վեհութիւնը։

Կը տեսնէի անոր լանջերը, ձորերը եւ կանաչ դաշտերը։ Անոր կողերէն կը վազէին ձիւկի հալոցքէն յառաջացած գետակները։ Եւ կարծեք կը լսէի անոր լանջերուն վրայ արածուող անասուններու զանգակներուն հնչիւնն ու աքաղաղներուն կանչը։

Օ'հ, ի՛նչ տեսարան։ Այստեղէն թռիչք առաւ խաղաղութեան աղանիկ՝ ձիւնեղի ճիւղը կտուցին։ Մասիսը դարձաւ խորհրդանիշ՝ վերածնունդի, հաւատքի եւ անմահութեան։ Այստեղ ծնունդ առին քաղաքակրթութիւններ, իշան մարգարէներն ու առաքելները՝ մարդկութեան բարօրութեան համար։

Այսօր, երբ Հայաստանի պետական ամպիոններէն կը հնչեն անգոյն խօսքեր, ինչպէս՝ «Արարատը մոռնա՛նք, Արագածը ունի՛նք», մարդ կը մռայլի, որովհետեւ Արարատը միայն լեռ չէ. ան հայ ժողովուրդի հոգեւոր խորհրդանիշն է, ա՛յն սրբավայրը, ուր հանգրուանեց Նոյեան տապանը, ուր սկսաւ մարդկութեան նոր կեանքը։

Ու որքան բանաստեղծներ հիւսած են գովքն ու խորհուրդը Արարատին, այնքան ան արմատացած է մեր հոգեմտաւոր կեանքին ու պատմութեան մէջ։

Այդ մեծաթիւ բանաստեղծութիւններէն մէկը Սիլվա Կապուտիկեանի «Մասիսի մօտիկ» քերթուածն է, ուր այսպէս կը նկարագրուի Մասիս սառը.

«Ղու այսօր այնպէս մաքու՛ր ես, Մասի՛ս, Գոյներդդ այնպէս ջինջ են, Նրբեանգ, Ասեւ չես հիթուած քար ու ւազգից, Այլ ջըրաներկով գծուած ես բարակ։ Այնպէս խաղող ես աշխարհին նայում, Եւ այնպէս մե՛րն ես, մօտի՛կ, մըտերիմ, Ասեւ չեն բերել քեզ դաւ ու արիւն, Զեզ չեն բաժանել քո որդիներից։ Ասեւ Արաքսը՝ գայրոյթից գունատ՝ Իմ ու քո միջեւ չի սառել այսպէս, Ու թէ այս ճամբով մի քիչ էլ զընամ, Մի քիչ էլ քայլեմ՝ հասնելու եմ քեզ...»։

Մեր ազգի երեք հազարամեակէ աւելի պատմութիւնը կապուած է այս լեռան հետ։ Ան տեսած է մեր յաղթանակներն ու պարտութիւնները, մեր արշաւներն ու վերապրումները։ Անոր լանջերուն վրայ գիւղացին իր հացը պատրաստած է, անոր բուրաստաններուն մէջ ծաղկած՝ հայուն հոգին։ Այսօր, Մասիսը, այո՛ւ, կը գտնուի Թուրքիոյ սահմաններուն մէջ, բայց ան մեր ինքնութեան այն հիմքերէն է, ինչպիսիք են՝ մեր լեզուն, խաչքարն ու աղօթքը։

Արարատը մեզի համար ոչ թէ քաղաքական, այլ ինքնութեան հարց է։ Երբ կը փորձեն զայն հեռացնել մեր յիշողութենէն եւ գիտակցութենէն, կը ջնջեն հայութեան ամենահիմնական պատկերն ու երազը։ Ինչպէս՝ Երուսաղէմը իր ժողովուրդին համար, այնպէս ալ Մասիսը հայուն համար աստուածային ներկայութեան շունչն է։

Մեր գրականութիւնը, մեր երաժշտութիւնը, մեր աղօթքները՝ բոլորը կը խնայարհին անոր առջեւ։ Պարոյր Սեւակէն մինչեւ Զարեան, Նարեկացիէն մինչեւ Թումանեան, Անդրանիկ Շառունեան ու Շիրազ՝ բոլորը իրենց ներշնչումը գտան Մասիսի հայեացքին տակ։ Անոր լոյսն է մեր գոյութեան անեղծուածը։

Այս խօսքերուս մէկ այլ վկայութիւնն է Զուլթի Ազգ. վարժարանի 2026 -ի տարեկան օրացոյցը, որուն էջերը նուիրուած են Արարատին, իւրաքանչիւրը՝ մէկ արուեստագետի Արարատը պատկերող գեղանկարով ու բանաստեղծի մը քերթուածէն տողերով մը։ Ստորեւ կը ներկայացնեմ օրինակ մը.

**«Արարատի ծեր կատարին
Ղար է եկել, վայրկեանի պէս,
Ու անցել։
Անհուն թուով կայծակների
Սուրն է բեկուել աղամանդին
Ու անցել։
Մահախուճապ սերունդների
Աչքն է դիպել լոյս գագաթին,
Ու անցել։
Հերթը մի պահ ընն է հիմա,
Դո՛ւ էլ նայիր սեզ ճակատին,
Ու անցի՛ր...»։**

Աւետիք Իսահակեան

Հայ ժողովուրդը պէտք է շարունակէ ապրիլ Մասիսի հոգեւոր ծոցին մէջ, նոյնիսկ թէ քաղաքական սահմանները տակաւին անջակտելի պատնէշ կը մնան։ Վերադառնալ՝ կը նշանակէ վերստին հաւատալ, նորոգել մեր կապը հողին, մշակոյթին ու լեզուին հետ։ Վերադառնալ՝ կը նշանակէ մերժել, որ հայը ապրի առանց իր սուրբ լեռան։


Ճակատագիրը պէտք է արձագանգէ, արդարութիւնը եւ իրաւունքը վերադառնան իրենց տերերուն, ինչպէս գրած է Ապուլ Զատն Շապի.

«Երբ ժողովուրդը մը կեանքը ընտրէ, ճակատագիրն ալ կը պարտադրուի արձագանգել»։

Հայ ժողովուրդը այսօր մի՛թէ պակաս հաւատք ունի։ Ո՛չ։ Ան կը կրկնէ նոյն խօսքը.

- Պէտք է ճակատագիրը արձագանգէ։

Որովհետեւ մինչ Մասիսը կանգուն է, հայութիւնն ալ կը մնայ կանգուն։



ԿԻՐԱԿՈՍ ԳՈՅՈՒՄՃԵԱՆ

ՀՊԳԵՒՈՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻ ՏԱՐԻ

«ԼԵՑՈՒՆ ԿԵԱՆՔ»

«Ես եկայ, որ կեանք ունենան եւ ա՛լ աւելի ունենան»

Յովհաննու 10:10

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետը իւրաքանչիւր տարի մեզ կը հրաւիրէ խոկայու եւ ծրագրելու մեր հայկական կեանքերը յուզող շատ մը իրականութիւններու վերաբերեալ: Այս ծիրին մէջ ան 2026 տարին հռչակեց «Հոգեւոր կեանքի վերանորոգումի տարի», ինչ որ շատ կարեւոր եւ հրամայական նիւթ-մտահոգութիւն է: Պիտի չուզէինք առանձնացնել այս տարուան բնաբանը նախորդ տարիներու բոլոր մտահոգութիւններէն, բայց պիտի յանդգինք ըսելու, որ «հոգեւոր կեանքի վերանորոգումը» այժմեական, հրատապ իրականութիւն է:

Զ’ուշանար վեհափառ հայրապետին բացատրութիւնը. «Պարագայական որոշում մը չէ սա, այլ հրամայական անհրաժեշտութիւն մը՝ ի տես հայ կեանքէն ներս հոգեւոր կեանքի առանցքային կարեւորութեան նահանջին»: Ան կը գիտակցի այս «նահանջին»: Մեր համահայկական իրաւիճակը այսօր կը պարզէ այս «նահանջ»ը: Կաթողիկոսը քաջ կը գիտակցի, որ՝ «Քրիստոնէական հասկացողութեամբ մարդը ֆիզիքականէն անդին ու վեր, հոգեւոր գոյութիւն է՝ Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ ստեղծուած»: Ֆիզիքականէն անդին՝ մարդուն արժեւորումը հոգեւորի ինքնութեամբ կեանք է, որ մարդը՝ իմա հայը, պարտի ապրիլ աշխարհի մէջ, եւ որ՝ կը տանի զինք յաւիտեանականութեան:

Հաւատքի հասկացողութիւնը կարելի չէ անշատել ազգի ու հաւաքականութեան մը ընկերամշակութային եւ պատմաքաղաքական իրականութիւններէն: Հաւատքը կ’արտայայտուի եւ կ’արտայայտէ ազգ-հաւաքականութեան մը կեանքի ինքնութիւնը: «Հաւատքը ինքզինք կ’արտայայտէ տուեալ մշակոյթի ճամբով, եւ մշակոյթը քրիստոնէական նկարագիր կը ստանայ հաւատքի ազդու ներկայութեամբ», կ’ըսէ վեհափառ հայրապետը: Եթէ հաւատքը կը մտնէ հաւաքական կեանքի մէջ, այդ կու տայ ինքնութիւն, բայց երբեք չի նսեմացներ կամ տարանջատել զայն:

Հաւատքը կը զօրացնէ հաւաքականութիւնը եւ կու տայ ուժ ու նոր թափ: Թէեւ հաւաքականութեան մաս կազմող եկեղեցական համայնքները կ’արտայայտեն իրենց հոգեւոր կեանքը տարբեր «շեշտաւորումներով», բայց հիմքը կը մնայ նոյնը: Երկնային արժեքներու հաւատարմութիւնն է Աստուծոյ ներկայութիւնը ապրիլ «լեցուն կեանք»-ի մը մէջէն, որ մեզի շնորհուեցաւ Յիսուս Քրիստոսի միջոցով, երբ Աստուածաշունչը կ’ըսէ. «Ես եկայ, որ կեանք ունենաք եւ ա՛լ աւելին»: «Ա՛լ աւելին» լեցուն կեանքն է, որ Յիսուս Քրիստոսի միջոցով կը բացատրուի ապաշխարութեան հասկացողութեան մէջէն:

Քրիստոնէական աստուածաբանութեան հիմքը ապաշխարութիւնն է՝ նոր կեանքը, որ Քրիստոս մեզի շնորհեց, երբ խաչին վրայ մահացաւ, բայց յարութիւն առնելով՝ ստեղծեց նորը: Մարդը՝ նոյնքան նաեւ հայը, կը ստանայ այս նորը, երբ ապաշխարութեան միջոցով Աստուծոյ ներկայութիւնը կը դարձնէ ապրուած կեանքի հիմքը: Ապաշխարութիւնը «բողոքական» վարդապետական ուսուցում մը չէ: «Եթէ մարդ մը նորէն չծանի, չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել» (Յովհաննու 3:3): Նորէն ծանիլը ուրիշ բացատրութիւն չունի, եթէ ոչ՝ ապաշխարութիւն: Ապաշխարութիւնը ապրող իրականութիւն է, որ մարդուն կեանքը կը վերածէ «լեցուն կեանք»-ի իրականութեան:

Ապաշխարութիւնը ինքնաճանաչման եւ հոգեկան մաքրագործման կարեւորագոյն ճանապարհներէն մէկն է: Այդ միայն մեղքերու խոստովանութիւնն չէ, այլ՝ մարդու ներքին աշխարհին մէջ կատարուող խոր փոփոխութիւն, որ կը սկսի խղճի ծայնը լսելով եւ կը հասնի Աստուծոյ հետ վերանորոգուած յարաբերութեան: Ապաշխարե՛լ՝ կը նշանակէ կանգ առնել, անկեղծօրէն նայիլ սեփական կեանքին եւ գիտակցիլ այն սխալ քայլերուն, որոնք հեռացուած են մարդը բարոյական եւ հոգեւոր ճշմարտութենէն: Ապաշխարութեամբ մարդը կը վերստեղծուի՝ կը ծնի, «հաշտուելով» Աստուծոյ հետ եւ նոր կեանքի մէջ սկսելու վճռակաւութեամբ: Վեհափառ հայրապետը կը բնութագրէ այս իրականութիւնը հոգեւոր կեանքի իր բացատրութեան մէջէն՝ որպէս «Կեանքի որակ, որուն առանցքը Քրիստոս ինքն է՝ իր ուսուցումները, հրաշքներէն եկող պատգամները, իր խաչն ու յարութիւնը»:

Եկեղեցական ւաւանդութեան մէջ ապաշխարութիւնը նաեւ համայնքային երես ունի: Թէեւ այդ խորապէս անձնական փորձառութիւն մըն է, սակայն կը կապէ մարդը Եկեղեցւոյ ամբողջ մարմնին հետ: Խոստովանութեան միջոցով հաւատացեալը կը զգայ, որ միևնաջէ իր պայքարներուն մէջ, այլ մաս կը կազմէ միասնութեան մը, ուր աղօթքը, խորհուրդը եւ սիրոյ ներկայութիւնը փոխադարձաբար կը զօրացնեն բոլորը: «Հոգեւոր կեանքը եկեղեցիէն անջատուած անձնակերպոյն կեանք չէ, հոգեւոր ու բարոյական արժեքները Եկեղեցիէն դուրս ապրելու իւրայատուկ եղանակ մը չէ. այլ Եկեղեցւոյ համայնական կեանքի շրջագիծէն ներս, հոգեւոր արժեքներու շեշտաւորումով ապրուած կեանք է», կ’ըսէ վեհափառը:

Եկեղեցական խորհուրդներու շրջանակին մէջ ապաշխարութիւնը ունի խոր բնոյթ: Խոս-



Լուսակարը Էդկար Յարութիւնեանի

տովանութեան խորհուրդը հաւատացեալը կը միացնէ Քրիստոսի խաչին եւ յարութեան խորհուրդին: Մեղքի խոստովանութիւնը մահ է հին մարդուն համար, իսկ ներման շնորհը՝ նոր կեանքի յարութիւն Քրիստոսի մէջ: Ապաշխարութիւնը մասնակցութիւն մըն է փրկագործական իրադարձութեան, որ իրականացաւ Գողգոթայի վրայ, բայց կը շարունակուի Եկեղեցիին կեանքին մէջ: Վեհափառ հայրապետը կը շեշտէ այս իրականութիւնը. «Հոգեւոր կեանքը, հաւատացեալի եւ հոգեւորի միջեւ տարբերութիւն տեսնող կեանք չէ, առաջինը նկատելով՝ Եկեղեցւոյ դաւանանքին ու աւանդութիւններուն հետեւող, երկրորդը՝ իր հոգեւոր կեանքը ինք ստեղծող: Նման անջատում ճիշդ չէ: Միւս կողմէ՝ Եկեղեցւոյ պատկանիլը բնական ընթացքով հոգեւոր չի դարձնէր ենթական: Հոգեւոր կեանքը Եկեղեցւոյ հաւաքական կեանքին մէջ հոգեւոր արժեքներու ապրուած կեանք է»:

Կեանքի ընթացքին մարդը բազմիցս կը կանգնի բարիի եւ չարի յայմերուկին վրայ: Ապաշխարութեան հոգին կենդանի պահելով՝ ան կը սորվի միշտ վերադառնալ ճշմարիտին, նորոգուիլ սիրոյ մէջ եւ աւելի լուսաւոր կերպով ապրիլ իր հաւատքը իր շրջապատին մէջ: «Հոգեւոր կեանքը Աստուծոյ շնորհքով փրկութեան հրաւիրուած ըլլալու կեանք է, եւ փրկութեան ճանապարհէն հաւատքով ու հաւատարմութեամբ քալելու յանձնառութիւն է՝ միշտ զգուշ ըլլալով չիեռանալու փրկութեան ճամբէն (Եբր 2:1)», կը հաստատէ վեհափառ հայրապետը: Ապաշխարող մարդը արդէն իսկ կը սկսի ապրիլ այս կեանքը աշխարհի մէջ, որ իր ամբողջական իրագործումը պիտի գտնէ Աստուծոյ յաւիտենական ներկայութեան մէջ: Այսպէս, ապաշխարութիւնը կը դառնայ ոչ թէ տիրութեան, այլ յոյսի, յոյսի եւ վերածնունդի կեանք: «Հոգեւոր կեանքը հաւատքով թրծուած ու յոյսով զօրացած կեանք է» (Արամ Ա. վեհափառ հայրապետ):

Ապաշխարութիւնը մարդը եւ հաւաքականութիւնը կը գետնդէ «լեցուն կեանք»-ի իրականութեան մէջ: Այս «լեցուն կեանք»-ը կը սորվինք Աստուածաշունչի միջոցով: Վեհափառը կը շեշտէ. «Աստուածաշունչը անանջատելի մասը պէտք է կազմէ մեր կեանքին»: Եթէ անհրաժեշտ է, որ կարդանք Աստուածաշունչը, բայց նոյնքան եւ աւելի՝ «Հրամայական է ապրիլ Աստուածաշունչի պատգամը՝ զայն դարձնելով ուղեցոյցը մեր մտածումներուն, գործերուն ու ապրելակերպին» (Արամ Ա.): Հետեալաբար Աստուածաշունչը պէտք է նկատել մեր ազգային համապարփակ դաստիարակութեան անբաժան մասնիկը: Վեհափառ հայրապետը կը գիտակցի, երբ կ’ընդգծէ. «Ազգայինը դարձած է տիրական՝ ի հեճուկս հոգեւորին»: Ան կ’ընդգծէ. «Հոգեւոր արժեքներուն կենսական կարեւորութիւնը հայ կեանքէն ներս՝ որպէս աղբիւր մեր բարոյական, մշակութային, կրթական ու ազգային արժեքներուն»:

Հայ ժողովուրդի դիմագրաւած մարտահրաւերները այսօր չեն պարփակուիր միայն քաղաքական, ռազմական եւ աշխարհաքաղաքական իրաւիճակներու մէջ: Հայ ժողովուրդը այսօր նոյնքան նաեւ կ’ապրի հոգեւոր կեանքի տագնապ եւ կը նահանջէ իր հոգեւոր արժեքներու գիտակցութեան մէջ: Վեհափառ հայրապետը կը զգաստացնէ մեզ բոլորս, երբ կը դնէ իւրաքանչիւրս այս մեծ իրականութեան դէմ յանդիման՝ 2026 տարին հռչակելով «Հոգեւոր կեանքի վերանորոգումի տարի»:

Հոգեւորը պարտինք վերականգնել եւ վերապրիլ: Պիտի տքնինք դարձեալ կերտելու ու հասնելու «լեցուն կեանք»-ի իրականութեան: Անհատական, ընտանեկան, հաւաքական ու ազգային մեր կեանքերը պարտինք լիցքաւորել «լեցուն»-ի գիտակցութեամբ: Այս այն «լեցուն կեանք»-ն է, որ «աւելի»-ն է:

Այս «լեցուն» եւ «աւելի» կեանքով է, որ հայը պիտի դնենք պատմութեան շարունակականութեան գործընթացին մէջ:

ՊԿԿՏ. ՀՐԱՅՐ ԵՎՊԵՏԱՆ

Յունուար 2026
Կիպրոս

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ՝ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ ՄԸ, ՈՐ ՊԵՏՔ ԶԷ ԱՒԵԼԻ ՈՒՇԱՆԱՅ

Սոյն բաց նամակը կը ներկայացնէ ոչ միայն մէկ քաղաքացիի մտահոգութիւնը, այլ կը հնչեցնէ ամբողջ ազգի խղճմտանքը՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանի նկատմամբ մինչեւ այսօր չիրագործուած պարտաւորութեան մասին:

ԲԱՅ ՆԱՄԱԿ՝ առ ի գիտութիւն քաղաքապետական եւ պետական բոլոր պատասխանատու կառոյցներուն:

Յարգարժան պատասխանատուներ, Այս նամակով կը դիմեմ ձեզի՝ իբրեւ հայ ժողովուրդի զաւակ, մտահոգ քաղաքացի եւ ազգային յիշողութեան նկատմամբ պատասխանատու անձ, խիստ յորդորելով ձեր անմիջական ուշադրութիւնը դարձնել Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանի առնչուող մինչեւ այսօր չիրագործուած կենսական առաջադրանքներուն:

Այս տարի կը նշուի Արամ Մանուկեանի մահուան 107-րդ տարելիցը: Ան այն պատմական անձնաւորութիւնն է, որ վճռականօրէն խարսխեց մեր պետականութեան հիմնաքարը: Սակայն, ցաւ ի սիրտ, Հայաստանի Հանրապետութիւնը տակաւին չէ կատարած իր բարոյական ու պետական պարտքը անոր անմեռ յիշատակի առջեւ:

Այսօր ա՛լ՝
* Արամ Մանուկեանի աճիւնները տակաւին չեն ամփոփուած Երեւանի պանթէոնի մէջ՝ մեծերու կողքին,

* Անոր փլատակ դարձած բնակարանը՝ Արամի փողոցին վրայ, տակաւին չէ վերականգնուած եւ տուն-թանգարանի վերածուած,

* Եւ անոր արժանի պետական մեծարումը կը մնայ կիսատ ու անտեսուած:

Այս իրականութիւնը ոչ միայն ազգային անպատուութիւն է, այլ նաեւ՝ պատմական յիշողութեան դէմ լուռ անարդարութիւն:

Հետեալաբար, խիստ յորդորով ձեզի կը թեւադրեմ, որ ձեր պատասխանատու կառոյցները՝

1.- Ձեռնարկէն Արամ Մանուկեանի աճիւններու արժանապատիւ ամփոփման



գործին՝ Երեւանի պանթէոնին մէջ,
2.- Անյապաղ մեկնարկէն անոր բնակարանի վերականգնման ու տուն-թանգարանի հիմնադրման ծրագիրը՝ այս ամբողջ նախաձեռնութիւնը իր լրումին հասցնելով մինչեւ Արամ Մանուկեանի մահուան 110-ամեակը:
Այս նախաձեռնութիւնները ոչ թէ անցեալի հարցեր են, այլ՝ մեր ապագայ սերունդնե-



րու համար պատմական ինքնութեան ամրապնդման կենսական քայլեր:

Վստահ եմ, որ դուք կը կիսեք այս խորապէս ազգային ու սրբազան պարտքի գիտակցութիւնը եւ շուտափոյթ գործնական քայլերու կը ձեռնարկեք:

Յարգանքով՝
ՅԱԿՈԲ ՃԱՆՍԿԱՆԵԱՆ

ՏԱՐԵԴԱՐԶ՝ ԿԵԱՆՔԻ ՆՈՐ ԹՈՒՎԱԿԱՆ

Տարեդարձս կը մօտենայ: Գիտեմ: Լաւ եմ: Թէեւ այլեւս այն չեմ, ինչ որ էի, բայց չեմ ափսոսար, որ այս տարիքիս յիշողութիւնս սկսած է դաւաճանել եւ անցեալս կորսնցնել: Բայց միշտ կը փորձեմ վերադառնալ ես ինձի:

Երբ կը նայիմ տարիքիս երկայնքին ու լայնքին, անմիջապէս կը փորձեմ զննել հարազատներու աչքերը, որոնք յաճախ ինձի լուրջին սորվեցուցին, ու կը զգամ, որ տակաւին կեանքի գիրքը լման չեմ կարդացած: Իսկապէս կ’անդրադառնամ, որ բոլորին նման եւ բոլորէն տարբեր՝ ես ալ մեծցած էի տարուէ տարի՝ խրատներու շարանով, մեծերուս աչքերու խիստ հայացքներուն տակ, ինձի համար նոր ու երբեմն ալ անհասկնալի օրէնքներով, բազմաշերտ աւանդութեան տողերով, հարազատներուս փորձառութեան թելերէն կախուած... սակայն՝ ոչ միշտ, յաճախ ընդդիմանալով, երբեմն տեղի ու անտեղի պատժուելով, իսկ վերջաւորութեան՝ միշտ հնազանդելով:

Բոլորին նման, մեծցած էի՝ պարզ եւ բարդ օրերով, ահով, վախով, խաղերով, դասերով, թախիծով, ցաւերով, ուրբայ եւ տխուր յուզումներով, զգուշաւոր սերերու կարօտով, նոյնքան երանելի օրերով: Այս բոլորին մէջէն ճանչցած էի՝ կեանքը, ընկերներս, շրջապատս: Միշտ ուզած էի անմիջական շրջապատես ներս պարզ թիւ մը չմնալ: Անոր համար յաճախ արցունքները ինձմէ առաջ վազած էին: Ու երբ բաւական մեծցած էի՝ իբրեւ Ամենակալէն շնորհ-պարգէտ, սկսած էի գրել՝ սրտի արիւնով, տողերուս վրայի վերջ-սպիներով եւ կարօտով: Իսկ ահա նոր օր մըն է, որ կը մօտենայ: Նոր տարեդարձ: Կեանքի նոր թուական:

Կը հաւատամք՝ թուականներ կան, որոնք ժամանակի ընթացքին աւելի կ’իմաստաւորուին, աւելի կ’արժեւորուին ու կը դառնան տեսակ մը նոր մեկնակէտ՝ մեծ, մնայուն, կենարար, հասուն եւ հոգաճու: Կարծես այս մէկն ալ անոնցմէ է:

Ու նոյն այս հասունացած տարիքն է, որ կը սնուցանէ հոգեկան ծաղրով՝ Նոր իմաստ կու տայ օրերուդ: Կեանքիդ: Կը խորացնէ ժամերուդ իմաստը: Կը համախմբէ մտածումներդ: Եւ իբրեւ հոգաճու վերաբերում ու շնորհակալ աշխատանք՝ նաեւ կ’արժեւորէ օրուան պահերդ, մթնոլորտդ, վայրկեաններդ: Ու անկէ ետք կը սկսիս սքանչացումով ապրիլ:



Ամեն օր երեւակայութիւնդ կը հալածէ քեզ, մտածումներդ կ’օրօրէ ու յստակօրէն կը սկսիս լսել սրտիդ տարբեր տրոփումը: Ու վախ մը կ’ապրիս: Կը զգաս, որ այլեւս ուրիշ մըն ես: Ա՛լ տարբեր՝ բու հինեղ...Նախկինեղ: Ապա ջուրը, գինին, գարեջուրը կը սկսիս խմել կում առ կում: Նոյնիսկ երբ սկսիս խօսիլ, կարծես կեանքը նոր սկսած ըլլայ: Բաներդ կը ծամես դանդաղ եւ նոյնքան ալ կմկմալով: Ամեն օր ետեւ նայելով՝ անցեալդ կը փնտռես ու վերջապէս կ’անդրադառնաս, որ տարիներուդ ստեղծած ակօսներուն մէջ, այդ հսկայ տարածութեան տակ պահ դրած ես բոլոր յուշերդ:

Ապա ինքնաբերաբար կը սկսիս համրել մտածումներդ: Միտքը, անհանգիստ հոգիդ անհամբեր ժամեր շարունակ կեանքիդ երանութիւնը երակներով մէջէն հոսիլ կու տաս:

Այսպէս, ամայացած լիճի նման, առանձնացած, երկար կը մնաս սենեակիդ չորս պատերէն ներս՝ անշարք գեղեցկութեամբ, եւ սակայն՝ հետապնդող աչքերով: Ու ինքնաբերաբար կը փորձես մտնել նոյն այդ լիճին մէջ, տեսնելու վաւերականը, իրականը, դուն քեզ կրկին ճանչնալու միտումով: Ու որքան մօտենաս լիճի յատակին հետաքրքրութիւնդ կը սկսի լայննալ ու կը փորձես հաւատաւոր ուխտաւորի նման պտտիլ: Անհանգիստ

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ
bedig43@aol.com

Շաբ.ը՝ Էջ 6

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՆԵՐ...

Շարունակում 3-րդ էջին

Այս ամենի առջեւ խուլ ու կոյր ձեւանալով՝ Հայաստանի իշխանաւորները թուրքակի պէս կրկնում են իրենց առաջնորդի ստերը խաղաղութեան հաստատման մասին եւ ժողովրդին մուրթեցնելով՝ յայտարարում են, թէ Հայաստանը միայն իրենց օրօք է դարձել իրապէս անկախ։ Միայն թէ նախկինները յաղթանակներ էին տանում թշնամուն ծնկի բերելով, իսկ ներկաները անկախութիւնն «ամրապնդում են»՝ պատերազմներում պարտուելով, երկրի սահմանները յանձնելով, բանակը կազմաքանդելով եւ վերացնելով նրա դիմադրական ներուժը։ Իրենց անկախ երկրի ղեկավարներ յայտարարողներն արտաքին քաղաքականութեան մէջ գնում են շարունակական զինջումների՝ երբեք չընդդիմանալով որեւէ պահանջի եւ երբեք չներկայացնելով հայկական կողմի որեւէ պահանջ։ Նրանք դըրսում վարկաբեկում են երկրի ազգային ուժերին ու աջակցութիւն են մուրում նրանց դէմ պայքարելու եւ իշխանութիւնը պահպանելու համար։ Եթէ աւելի յստակ սահմանագծենք նախկինների եւ ներկաների միջեւ եղած տարբերութիւնը, ապա կարելի է պատկերաւոր ասել, որ ներկաները ծնկած են այն թշնամու առջեւ, որը ծնկած էր Հայաստանի նախկին իշխանութիւնների առջեւ։ Նիկոլ Փաշինեանին օդի ու ջրի պէս անհրաժեշտ է, որ արտաքին ուժերը չպարտադրեն իր խոստացած զինջումները, մինչեւ որ կը յաջողացնի զալիք ընտրութիւններում ապահովել իր խմբակի յաղթանակը։ Իսկ առկայ բոլոր զգայուն ու բարդ հարցերից ժողովրդին շեղելու համար նա պատրաստ է ամեն օր փոթորկել երկրի ներքին մթնոլորտը, եւ դրա համար աւելի զգայուն խնդիր չկայ, քան՝ ոտնձգութիւնները մայր եկեղեցու դէմ։

Ի հարկէ, ազրպէյճանաթուրքական դաշինքը պատրաստ է իր յաւակնութիւնները զսպել ժամանակաւորապէս՝ Փաշինեանին ուղղակի եւ անուղղակի կերպով թիկունք լինելու համար,

սակայն կասկածում է վերջինիս յաղթանակին, եւ դրանով իսկ Հայաստանի նկատմամբ ունեցած գիշատչական ծրագրերի իրականացման հեռանկարին։ Հետեաբար, վերջինս, անկին քշուած զազանի վիճակում յայտնուած Փաշինեանից պահանջում է եւ դեռ պահանջելու է որոշակի զիջումներ՝ մինչեւ ընտրութիւնները։

Փաշինեանը, զգայուն թեմաներ նետելով հրապարակ, հասարակական միտքը շեղում է ոչ միայն իր կատարած բազում յանցաւոր գործերից, այլեւ՝ այն ամենից, ինչը դեռ պէտք է կատարի առաջիկայ ամիսներին եւ մանաւանդ՝ իշխանութեան վրայ վերահաստատուելուց յետոյ։ Ազրպէյճանաթուրքական եւ արեւմտեան օրակարգերում են մնում՝ Հայաստանի սահմանադրութեան փոփոխութիւնը (սահմանադրական կարգի տապալումը), 300.000 ազրպէյճանցիների բնակեցումը Հայաստանում, որով փաստացի կը լուծեն Սիւնիքի թուրքացման հարցը, Ռուսաստանի հետ տնտեսական եւ ուժանիւթային կապերի փոխարինումը թուրք-ազրպէյճանականով։ Նոյն օրակարգում է Հայկական հիւլէական կայանի փակման եւ Թուրքիայից ուժանիւթային կախման մէջ յայտնուելու ծրագիրը։ Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը Հայաստանում փակելու է մօտ 250 դպրոց, կազմալուծելու է գիտական համակարգը՝ ՀՀ ազգային ակադէմիայի, ակադեմական հիմնարկների լուծարմամբ։ Կորթական համակարգերից դուրս են բերում, սահմանափակելում ու աղաւաղում են հայազգիտական առարկաներն ու նրանց ծրագրերը։ Երկրում հալածուելու եւ վերացուելու է այն ամենը, ինչը ազգային յիշողութեան, ազգային ինքնութեան տարրեր է պարունակում եւ կարող է հիմք ծառայել հայկական ինքնութեան, երկրի ու պետութեան վերածնութեան համար։ Նիկոլ Փաշինեանը եւ ազգային ինքնութիւնից օտարւած նրա խմբակն առաջիկայ ամիսներին շարունակելու են

տաք պահել Եկեղեցու եւ իրենց արհեստածին օրակարգի միւս հարցերը՝ հասարակութեանը առկայ հիմնահարցերից շեղելով, մինչեւ որ օրէնքի ու օրինականութեան ոտնահարմամբ յաջողեն երկարածգել իրենց իշխանութիւնը։ Նրանք փորձում են հասարակութեան մի հատուածի գիտակցութիւնը պահել այն անբարոյ մտայնութեան ազդեցութեան տակ, որ տարածաշրջանում մեր ապագան պէտք է կապուած լինի Ազրպէյճանի ու Թուրքիայի հետ, եւ որ՝ վերջիններս գերադասելի են «սեփական նախկիններից»։

Աղետալի հեռանկարը կանխելու համար այժմուանից ազգային ուժերը պէտք է հրապարակ իջեցնեն իրենց օրակարգերը, իշխանութիւններին կանգնեցնեն բարդ հարցերի պատասխանելու, եօթ տարուայ խոստումների եւ արուածի համար բացատրութիւն տալու պարտադրանքի առջեւ։ Իւրաքանչիւրը, որ յաւակնում է երկրի համար պատմականօրէն ծանր ժամանակահատուածում կանգնելու նրա տարութերուող ղեկի մօտ, պէտք է ներկայացնի իր դրական եւ այլընտրանքային ծրագրերը։ Մեր համոզմամբ, ժողովրդի տարիներ ձգուող կրաւորականութիւնը պայմանաւորում է ճանապարհային քարտէսով հիմնաւորուած ծրագրերի բացակայութեամբ, որոնք իրատեսական յոյսեր կը ներշնչէին հանրութեանը։ Իրատեսական, հաւասարակշիռ, կառուցողական, համախմբող, ինքնավստահ, գործունեայ քաղաքական դաշինքները դեռեւս կարող են ընդհանուր նպատակի շուրջ ձեւաւորուած համաձայնութիւններով կասեցնել դրսերում մշակուած դաւադիր ու հայակործան ծրագրերը։

«Դրօշակ», թիւ 1 2026 թ.

ՏԱՐԵԴԱՐԶ...

Շարունակում 5-րդ էջին

որոնում։ Ման գալ՝ միաժամանակ ապրելով տեսակ մը հոգեկան վայելք։

Ու վերջին. ահա թէ ինչպէ՛ս կը գիտնաս...թէ «ո՛վ էիր դուն...»։

Այս բոլորէն ետք դուն կը սկսիս երկար լռութիւններով խօսիլ։ Այրող բառերով արտայայտուիլ։ Լսելի ոտնածայներով քալել։ Շրջիլ։ Կը փորձես բոլորին հետ չմեռնող բառերով միտքը բացատրել՝ յաճախ կրկնելով այն բոլորը, որոնք տարիներէ ի վեր կրկնած էիր, եւ որոնք նոյնիսկ խօսակիցներուդ մտածումները սահմանած էին։

Անկախ քեզմէ՝ նաեւ կը խօսիս ինքնավստահ, բացուած գիրքի նման, երբեմն ալ՝ զանազան մտածումներ օրօրելով ու յաճախ ալ շուշանի նման ճերմակ մտերմութեամբ։ Ու կը զգաս, որ շատ շատեր աչքերէդ պիտի փորձեն կարդալ հոգիիդ քարտեքը։ Ու դուն կամաց-կամաց, պիտի շարունակես անցեալիդ մէջ մխրճուած պատահարները դուրս հանել։ Պիտի ուզես հոն բոյն դրած պահերը, որոնք չեն մոռցուիր, լոյս աշխարհ բերել։ Բոլորին դիմաց փռել։ Պահեր ցաւալի, ուրախ, տխուր կամ թախճոտ, նոր բացուող խորիւրդի նման, խաղաղ եւ նոյնքան ալ խռոված աչքերով դուրս հանել։

Բայց չես գիտեր՝ ինչո՞ւ եւ ինչպէ՛ս յանկարծ այդ յուշերուդ մէջէն կարօտը կը ծնի ու շուտով կը բռնկի։ Կեսնքը ինքզինք կը կրկնէ։ Դուն անպայման կը ցանկաս հինը վերապրիլ։ Հինը։ Նախկինը։ Հին գարուններուդ վերադառնալ։ Ահա թէ ինչո՞ւ ինքնաբերաբար կը պատռուի մտքիդ խաղաղութիւնն ու անդորրութիւնը, ու դուն շատ մօտիկէն կը լսես երանութեանդ աղաղակը՝ երկար հառաչանքի մը աղմուկով պարուրուած։

Ու վերջապէս կը փորձես կախարդական այս երագներդ հեռանալ։ Կը զգաս, որ երկար ատենէ ի վեր կապուած էիր յուշերուդ խառնուած երագներովդ։ Կ'ուզես անպայման Էուրթեանդ վերադառնալ։ Կը զգաս նաեւ, թէ այս բոլորին հետ մեղքի զգացումն է, որ ապրած էիր։ Կը շեշտես բոլորին, որ տակաւին աշխարհ մը ըսելիքներ-ընելիքներ ունէիր՝ հասցեագրած գաղութիդ ու հայրենիքիդ, չէրմ հաւատք փոխանակող, ճակատագրի վրձինով գծուած խորունկ համոզումով։ Վերջապէս այս ձեւով կը փորձես կեանքիդ նոր գիծը ուղիղ գծել։

Եւ ահա...կը գիտակցիս.... տարիներդ անցած էին երագի մէջէն՝ անվերադարձ։ Տեսանելի եւ այրող հարցերդ ու պատ-

կերներդ արդէն մշուշոտ տարածութիւն մը կազմած են մտքիդ մէջ։ Ու խաղաղ դաշտի վրայ յանկարծ ինկող շանթի նման՝ յանկարծ կը սթափիս։ Կը սարսափիս։ Կ'ուզես արթուն մնալ ու անպայման հիկեն դէպի նորին՝ անձանօթին վերադառնալ։ Բայց եւ այնպէս, յուշերուդ ստեղծած քաղցրութեան, կ'ուզես բաժնեկից դարձնել շրջապատդ ալ։ Ու կը զգաս, որ ներկադ արդէն ծածկած էր անցեալդ։ Սակայն յամառօրէն կը փորձես բոլորին հասկցնել, որ անցեալը մարդու կեանքին անբաժան մէկ մասնիկն է, եւ կարելի չէ զայն սրբել, սրբագրել, ճշդել։ Իսկ վերջաւորութեան գոհունակ ժպիտով կը փորձես բաժնուիլ մըթնոլորտէն՝ հոն ձգելով կեանքիդ գունաւոր եւ անգոյն պատկերները։ Գրեթէ գոհացած ես...

ՕՐԱՏԵՏՐ

3 ՓԵՏՐՈՒՄ

- 1841 - Վախճանում Յովհաննէս Միրզա քահանայ Վանանդեցիի, Իզմիրի մէջ։ Մնած էր 1772-ին, Վան։ Կրթութիւնը ստացաւ Կսուց անապատին եւ Պոլսոյ Մայր դպրատան մէջ։ Հայկաբան եւ բանաստեղծ, դասաւանդարձած է Իզմիրի Մեսրոպեան վարժարանին մէջ։ Բանաստեղծութիւններէն «Հայաստան», երկիր դրախտավայր»-ը երգի վերածուած է։
- 1907 - Մոսկոյ դերասան Հրանդ Մանուկեանի, Գիւմրիի մէջ։ Մահացած է 1995-ին, Երեւան։
- 1933 - Վախճանում Վիեննայի Մխիթարեան միաբան հայր Յակոբոս վարդապետ Տաշեանի։ Մնած էր 1866-ին, Կարսոյ Արծաթի գիւղը։ Ձեռագրագետ, բանասեր, լեզուաբան եւ հայագետ, հեղինակ է մեծարժեք աշխատութիւններու։
- 1983 - Մոսկոյ բանաստեղծ Կարէն Անտաշեանի, Վանաձորի մէջ։

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՍՈՒՏՈՔՈՒ

5			3		7				4
		7				5			
				9					
4				1				9	
		5	2		3	8			
3				6					1
				5					
		2				3			
1			8		4				5

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնավերով (8x9) կազմուած գնացանցը բաղկացած է իւրաքանչիւր 9 ջառանգուի հազուրդ 9 բաժինների (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր ջառանգուի մէջ թուանշան մը գետնել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 ջառանգուի մէջ իւրաքանչիւր բաժին ունենայ 1-ն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի պարստուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժնի մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ձգորիս ջառանգուիներում մէջ գետնողաւ են:

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒՄԻ ԼՈՒԽՈՒՄՆԵՐԸ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ա	Բ	Դ	Դ	Թ	Ե	Ա	Դ	Դ	Դ	Դ
2	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
3	Ա	Բ	Ա	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
4	Ա	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
5	Ա	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
6	Ա	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
7	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
8	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
9	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
10	Ա	Դ	Ա	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ
11	Ա	Դ	Ա	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ	Դ

ՍՈՒՏՈՔՈՒ

8	7	5	9	1	3	6	4	2
3	6	4	5	2	8	1	7	9
1	2	9	6	4	7	8	5	3
5	3	7	8	6	4	2	9	1
9	1	6	2	3	5	7	8	4
2	4	8	1	7	9	5	3	6
6	9	3	7	5	2	4	1	8
7	8	1	4	9	6	3	2	5
4	5	2	3	8	1	9	6	7

- ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ**
1. Դեռահասակ - Իմացիոն:
 2. Ծարաւկա տեղի - Հանգստանքներու ծանօթ:
 3. Այրուբենէն - Բաժնի երկրէն՝ «... Ազատող» - Աջ:
 4. Ականջի կեղտ - Հանգուան:
 5. Նկարչական կարմիր ներկ - Լեցուն:
 6. Շանի - Սանդ:
 7. Բաժանումի գիծ - Հեծել:
 8. Նախաճաշիկ - Մաքրութեան խոճակ:
 9. Ցուցական ածական - Հոյլ - Վիշուս աստուծոյ եռթնորորդ մարմնացումը:
 10. Օդի մէջէն սլացող - Փխաջար:
 11. Լծորդութիւն - Կատուագլխի գազան - Անձնական դերանուն:

- ՈՐՈՂԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ**
1. Ֆրանսական «Միլարժ» տիպի օդանաւերու հնարիչը:
 2. Յոյն դից - Արական օտար անուն:
 3. Ստանի լիճերէն - Կամախի իւրաքանչիւր մաս - Նաեւ:
 4. Տանիք - Նորապսակ կին:
 5. Պատարագի բաժակ - Ապառաջի գեղանկարիչ:
 6. Մորթէ պարկ - Համադասական շաղկապ - Պտուղի արդաւագ:
 7. Երեկոյ - Ձայնակից տառեր:
 8. Անկողմաւ կա:
 9. Սերմաքիակ - Ա. Մ. Նահանգներէն:
 10. Միւս - Թշուա իրելով պտուղ:
 11. Ածականակերտ մասնիկ - Փակաւը - Կակուղ ուտելիք:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ



ՆՅՍՐԻՔ «ՎԱՆԱՅ ՁԱՅՆ»-ԷՆ

Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 ԷՆ 95 MHz

7.00- Զայերգներ

7.03- Առաւօտ լուսոյ / Բարի լոյս

7.15- Հանդարտ երգեր

7.30- «Բարեւ»

8.30- **Լուրեր - Առողջապահական խորհուրդ**

9.00- «Բարեւ»

9.30- «Բարեւ» հարցազրոյց. հիւր՝ Գօգօ Զէլէշեան (ուղիղ՝ դիմատեսքով)

10.00- Խանդավառ երգեր

10.30- **Հայկական աշխարհի լուրեր**

10.45- Լիբանանահայ երգիչներու կատարումներ

11.00- «Օրուան հետ»

11.10- Սփիւռցահայ երգիչներու կատարումներ

12.00- «Երկրի հարցը». հիւր՝ Արծուիկ Միհասեան

12.30- Հայրենի սիրուած երգեր

1.00- Ազգային-հայրենասիրական երգեր

1.30- **Լուրեր - Առողջապահական խորհուրդ**

2.00- «Յիշատակելիները» (Մարտիրոս վարժապետ)

2.05- Յեղափոխական երգեր

3.00- «Զըլ եոմ պիոյմու». (ուղիղ՝ դիմատեսքով)

4.00- «Գրական անդաստան» (Պարոյր Սեւակ)

4.20- Ժողովրդային երգեր

5.00- **«Վանայ Ձայն»-ը երեկոյեան**

5.05- «Ունկնդրութեան վայելքը» (Գարմէն Աճեմեանի հետ)

5.30- Վերամշակուած՝ ռեմիքս երգեր

6.30- **Լուրեր - Առողջապահական խորհուրդ**

6.50- Նոր երգեր

7.30- Ազգագրական-տոհմիկ երգեր

8.00- Օրուան խումբ («Նեմրա»)

8.30 - Radio Jazz

9.30- **Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)**

9.45- Չուգերգներ

10.00- «Գեղրգ Մարգպետունի» (Գ. հաղորդում)

10.30- «Հին երգեր, նոր անուններ»

11.00- Լատին ամերիկեան երեկոյ

12.00- «Յիշատակելիները» / Յեղափոխական երգեր

2.00- Հայրենի երգիչներու կենդանի կատարումներ

3.00- **Կրկնութիւններ**

4.30- Հայրեն ալլազան երգեր

6.00- Հանդարտ երաժշտութիւն

Ձեր մնայուն ընկերակիցը

Radio Voice of Van:Live

DOWNLOAD





ՊԱՍՔԵԹՊՈԼ

ՀՄԸՄ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ ԷՆ.ԷՍ.ԷՅ.ԷՆ՝ 104-94 ԱՐԴԻՆՔՈՎ

Երեկ Լիբանանի պասքեթպոլի տղոց ախոյեանութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն գծով ՀՄԸՄ-ի տղոց խումբը չկրցաւ զսպել Էն. Էս. Էյ.ի օտար մարզիկները եւ կրեց իր 7-րդ պարտութիւնը 16 մրցումներու ընթացքին:

Մրցումի սկիզբէն Էն. Էս. Էյ. 22-18 յառաջացաւ եւ մինչեւ կիսախաղ 54-43 արդիւնքով կը յաղթէր: ՀՄԸՄ Բ. կիսախաղին աւելի լաւ էր եւ 31 կէտեր նշանակեց՝ ստանալով 22 կէտ եւ պահ մըն ալ անցաւ 3 կէտով: Կը կարծուէր, որ ՀՄԸՄ պիտի յաջողի վերջին մասին, բայց այդպէս չեղաւ, եւ ճորտըն Սթիվընզ փորձեց ինքն իր վրայ առնել խումբը, բայց մրցակից խումբը լաւ ձեռով կը իսկել իրեն, բայց ճորտըն կրցաւ 39 կէտեր նշանակել: Պետք է ըսել, որ ինչպէս նշած էինք, մրցակից խումբի 104 կէտերէն 81 կէտերը խումբին օտարները նշանակեցին:

Յոյսով, որ տղաքը աւելի լաւ կը խաղան հինգ-շաբթի գիշեր Շանվիլի դէմ:



ՄԵՐԻՒՈ ՌԱՄՈՍ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԵՆԱՄԱՐՏ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ


Ռեալ Մատրիտի նախկին խմբապետ Մերիւիո Ռամոս բոնցքամարտի մենամարտ պիտի ունենայ, ինչպէս յայտնեց «Տէյլի Սփորթ»:

«Միսֆիթը Պոքսինկ» բոնցքամարտի երեկոյն տեղի պիտի ունենայ 22 օգոստոսին, Տոհայի մէջ:

Մատրիտեան ակումբի նախկին յետսապահի մրցակիցը պիտի ըլլայ խառն մենամարտերու («Էմ.Էմ.Էյ.») եւ քիթ պոքսինկ ամերիկացի յայտնի մարտիկներէն Էնտրու Թէյթ:

Կը նախատեսուի, որ մենամարտը 6 ռաունտերէ բաղկանայ: Մերիւիո Ռամոս հանդէս կու գայ 88,5 քկ. կշիռի կարգին մէջ:

Նշենք, որ Ռամոս վերջին անգամ կը խաղար մեքսիքական Մոնթերէյ ակումբին հետ եւ 2025-ի աւարտին լքեց գային:



«ՓՐԵՄԻԵՐ ԼԻԿ»

ԵՈՒՆԱՅԹԸՑ ՅԱՂԹԵՑ, ՄԻԹԻ ԶԿՐՑԱՒ ՅԱՂԹԵԼ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ



Կիրակի գիշեր, «Փրեմիեր լիկ»-ի 24-րդ հանգըր-աւանի մրցումներուն գծով Մանչեսթըր Եունայթըտ 2-0 արդիւնքով յառաջանալէ ետք Ֆուլհամի դէմ մրցումին, 2 կող ստացաւ մրցումի վերջին 5 վայրկեաններուն, բայց 94-րդ վայրկեանին կրցաւ 3-րդ կող մըն ալ նշանակել եւ յաղթել յաջորդական իր 3-րդ մրցումը Մայքըլ Զարիքի հետ:

Անցեալ 17 յունուարէն ի վեր Եունայթըտ կրցաւ յաղթել Մանչեսթըր Սիթիին (2-0), Արսենալին (2-3) եւ Ֆուլհամին (3-2):

Զատմիրո եւ Բուսիա նշանակած էին զուտ պրագիլական կոլեր, մինչ մեքսիքացի յառաջապահ Ռաուլ Խիմենս (փենալթիով) պրագիլցի Բելըն՝ Ֆուլհամի կոլերը: 74-րդ վայրկեանին դաշտ ներկայացած Պենիամին Շեշքօ 94-րդ վայրկեանին 3 կէտերը նուիրեց իր ակումբին անգապելի հարուածով: Շեշքոյի բախտը չօգնեց աւելի կանուխ, երբ հագիւ դաշտ

ներկայացած, գլխու հարուածով պիտի նշանակէր Եունայթըտի 3-րդ կոլը, բայց Ֆուլհամի բերդին աչ սիւնը փրկեց կացութիւնը:

Մանչեսթըր Սիթի Լոնտոնի մէջ կը մրցէր Թոթեմ-համի դէմ եւ կիսախաղին 2-0 արդիւնքով կը յաղթէր Շերքիի եւ Սեմենտոյի կոլերուն շնորհիւ:

Բ. կիսախաղին Թոթեմհամ աւելի լաւ էր եւ քանի մը առիթներով վտանգեց Ճիանլուիճի Տոնարումայի բերդը:

53-րդ եւ 70-րդ վայրկեաններուն Տոմինք Սոլան-քէ կրցաւ գրաւել Տոնարումայի բերդը կարելու կէտ մը շահելով իր դաշտին վրայ:

Երկրորդ կոլը կրնայ տարեշրջանի լաւագոյն կոլը ըլլալ, երբ Զոնըր Կալակետի օդէն փոխանցումին հարուածեց կարիճի հարուածով՝ խաբուելով Սիթիի պաշտպանողական ու բերդապահը:

«ԷՆ. ՊԻ.ԷՅ.»

10 ՄՐՅՈՒՄՆԵՐ ԵՐԷԿ. ԾԵՐԸԹ ԷԼԸՆ ՄՐՅԱՆԻՇ ԻՐԱԳՈՐԾԵՑ

Երեկ «Էն. Պի. Էյ.»-ի մրցումներուն գծով 10 ճակատումներ կային: Օրուան աստղ ընտրուեցաւ Զիլվէնտ Զեվելիրդի սենթըր ճերթ Էլըն, որ դարձաւ «Էն. Պի. Էյ.»-ի պատմութեան առաջին մարզիկը, որ 30 վայրկեաններու ընթացքին 40-է աւելի կէտեր նշանակեց, 15-է աւելի ռիպաուստ եւ 5-է աւելի Էսիսթ՝ Փորթլենտ Թրէյլ Պլէզըրդի դէմ մրցումին:

Զիլվէնտ, որմէ կը բացակայէին Տենիս Շրոտըր, Մաքս Սթրաս, Տարիլս Կարլենտ եւ Էվլեն Մոպլի, պետք ունէր ճերթի այս հերոսութեան, որ 29,5 վայրկեանի ընթացքին 40 կէտ նշանակեց՝ 17 ռիպաուստի, 5 Էսիսթի եւ 4 պլոքի կողքին: Սամ Մերիլ 22 կէտ աւելցուց, մինչ Ճէյլըն Թայսըն՝ 18 կէտ, իսկ Տոնալդըն Միչել 14 կէտ նշանակեց եւ 9 Էսիսթ կատարեց Զեվելիրդի հաշուոյն:



Մարէ (Տենվըր): Հիմնական 5 մարզիկներն են՝ Սթեֆ Զըրիի (Կոլտըն Սթեյթ) Լուքա Տոնչի (Լէյքըրզ), Շէյ Կիլճիլ-Ալեքսանտր (Օբլաիմա), Սիքուա Եոքիչ (Տենվըր Լակեյթ) եւ Վիքթոր Ուեմպան-եամա (Սան Անթոնիօ):

Երեկուան մրցումներուն, Տիթորոյիթ Փիսթընզ 53 կէտի առաւելութեամբ ծանր պարտութեան մատնեց Պրուքլին Նիթըր: Ճէյլըն Տիւրեն 21 կէտ եւ 10 ռիպաուստ ձեռք ձգեց ի նպաստ Տիթորոյիթի:

Նիւ Եորք Նիքս 60-44 արդիւնքով առաւելութիւն ձեռք ձգեց Լոս Անճելըս Լէյքըրզի վրայ Բ. կիսախաղին եւ մըրցումը յաղթեց 112-100 արդիւնքով:

Տոնչիչ 30 կէտ եւ 15 ռիպաուստ ձեռք ձգեց ի նպաստ Լէյքըրզի, մինչ Օ.Ճի. Ասուոպի 25 կէտ նշանակեց ի նպաստ Նիւ Եորքի:

Զուայ Լենըրտ 25 կէտ նշանակեց ի նպաստ Լոս Անճելըս Զիլվըրդի, որ 117-93 արդիւնքով յաղթեց Ֆինիքս Սանզին:

Նշենք, թէ Ֆիլատելֆիա 76-ըրզի աստղերէն Փոլ Ճորճ 25 մրցումով կախակայուեցաւ՝ խթանիչ դերեր գործածելու ստուգման քննութիւններէն բացակայելուն համար:

«ՄԵՐԻ Ա.»

ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ, ՆԱՓՈԼԻ ԵՒ ԵՈՒՎԵՆԹՈՒՄ ՅԱՂԹԵՑԻՆ

Իտալիոյ ախոյեանութեան՝ «Մերի Ա.»-ի 23-րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ինթեր Միլան 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Զրենոնեզէն, այս վերջինիս դաշտին վրայ:

Լաուջարօ Մարթինս եւ Փիոթր Չելեսքի նշանակեցին Ինթերի կոլերը: 60-րդ վայրկեանին դաշտ ներկայացաւ Հայաստանի ազգային խումբի նախկին խմբապետ Հենրիխ Միխայրեան, որ գեղեցիկ առիթ մը ստեղծեց Տիմաթրիի համար, որուն ռմբային հարուածը մեծ քառակուսիի սահմանէն յետսապահի մը դպնալով ջոռնըր ուղղուեցաւ:

Անցեալ տարեշրջանի ախոյեան Նափոլի, որ 3 մրցումներէ ի վեր յաղթանակ չէր կրցած արձանագրել, 2-1 արդիւնքով բաւական դժուար յաղթանակ արձանագրեց 18-րդ դիրքը գրաւող Ֆիորենթինայի դէմ: Վերկարա եւ



Կուլիբերես նշանակեցին Նափոլիի կոլերը, մինչ Մալոոր Սոլոմոն նշանակեց Ֆիորենթինայի միակ կոլը:

Եուվենթուս 4-1 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Փարման՝ այս վերջինիս «Էնիօ Թարտինի» դաշտին վրայ:

Պրագիլցի յետսապահ Պրեմեր (2), Մաքելին եւ Տէյվիտ նշանակեցին Եուվի 4 կոլերը, մինչ Զամպիասօ (սխալմամբ իր բերդին մէջ) նշանակեց Փարմայի միակ կոլը:

«ԼՍ ԼԻԿԱ»

ՊԱՐՍԵԼՈՆԱ ԵՒ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ ՅԱՂԹԵՑԻՆ

«Լա լիկա»-ի 22-րդ հանգրուանը բնական անցաւ, ուր առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը՝ Պարսելոնա եւ Ռեալ Մատրիտ սովորական յաղթանակներ արձանագրեցին:

Պարսելոնա 3-1 արդիւնքով յաղթական վերադարձաւ Էլչիի դաշտէն: Լամին Եամալ, Ֆեռան Թորքս եւ Մարքուս Ռալֆորտ նշանակեցին քաջալուական ակումբին կոլերը, մինչ ուրուկուեցի Ալվարօ Ռոտրիկես 29-րդ վայրկեանին նշանակած էր Էլչիի հաւասարութեան կոլը:

Ռեալ Մատրիտ 10-րդ վայրկեանին կորսնցուց իր անգլիացի միջնապահ ճուտ Պեյկնկիեմը (վիրաւորեցաւ), բայց կրցաւ 2-1 արդիւնքով յաղթել Ռայօ Վալենցաոյին: Վենիսիոս ժունիոր 15-րդ վայրկեանին նշանակեց Ռեալի առաջին կոլը՝ Պրահիմ Տիսի փոխանցումէն ետք (որ փոխարինած էր Պեյկնկիեմը), բայց Խորիւթ Տը Ֆրուլթոս նշանակած էր հաւասարութեան կոլը 49-րդ վայրկեանին:

Ռեալ Մատրիտ երկու անգամ ցնցեց Վալենցաոյի



բերդի ձողն ու սիւնը, բայց պետք ունեցաւ փենալթիի մը՝ 99-րդ վայրկեանին յաղթելու, շնորհիւ Զիլիան Էմպափիէ: Ասիկա ֆրանսացի յառաջապահին 22-րդ կոլն էր այս տարեշրջանին:

Աթլետիքօ Մատրիտ 0-0 արդիւնքով հեռացաւ Վալենսիա քաղաքէն, ուր կը մրցէր Լեվանթի դաշտին վրայ:

ԼԻԿ 1

ՄԵՆՏԵ2 ՓՐԿԵՑ ՓԱՐԻՉ ՍԵՆ ԺԵՐՄԵՆԸ

Փարիզ Սեն Ճերմեն 2-1 արդիւնքով բաւական դժուար յաղթանակ մը արձանագրեց Սթրազպուրկի դաշտին վրայ:

Սենիի Մայուլու 22-րդ վայրկեանին նշանակեց Փարիզի առաջին կոլը, բայց Փոլսկերայ Ափուլքի յետսապահ Կելս Տուէ նշանակեց Սթրազպուրկի հաւասարութեան կոլը, 5 վայրկեան ետք: Սթրազպուրկ, որ իր վերջին 8 մըրցումներուն անյաղթ կը մնար (6 ղեկոտմբերին), 81-րդ վայրկեանին կոլ մը ստացաւ, երբ Չէյր-Էմերիի փոխանցումէն օգտուելով, Նունօ Մենտեզ գլխու հարուածով նշանակեց Սեն Ճերմենի յաղթանակի կոլը՝ պահելով իր 2 կէտի առաւելութիւնը Բ. դիրքը գրաւող Լանսիի հետ:

Լանս 1-0 արդիւնքով պարտութեան մատնած էր Լը Հաւըր՝ շնորհիւ Ռուպէն Ակիյարի կոլին:



Մոնաքօ 4-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ռեննը՝ իր առաջին յաղթանակը արձանագրելով «Լիկ 1»-ի մէջ անցեալ 29 նոյեմբերէն ի վեր, երբ 1-0 արդիւնքով յաղթած էր Փարիզ Սեն Ճերմենի:

Անտու Ֆաթի, Աքլիուշ, Զուլիպպի եւ Իտումպօ նշանակեցին Մոնաքոյի 4 կոլերը: Խումբը այժմ կը գրաւէ 10-րդ դիրքը:

